ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան_____4

1. Հաստատության առաքելությունը_____5

2.Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ_____6

3. Հաստատության գործունեության վերլուծություն. ուժեղ և թույլ կողմերը_____34

4. Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները, խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները_____45

5. Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները, կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական աղբյուրները._____64

6. Ծրագրի գնահատման չափանիշները_____77

7. Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը _____83

8.Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաները, մարդկային ռեսուրսները._____88

9. Ծրագրի վերահսկողությունը._____92

Նախաբան

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:

/ ՀՀ Սահմանադրություն, հոդված 39 /

Ըստ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային Ժողովը:

Մեր երկիրը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի և զարգացման նախապայմաններից մեկը:Դպրոցի զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարական պլան, որը նպատակաուղղված է ապագա խնդիրների լուծմանը և դպրոցի առաջընթացը լիակատար դարձնելուն:

Այն մշակվել է <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ հաշվի առնելով դպրոցի և մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, դպրոցում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև համայնքի առանձնահատկությունները:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Բարեկեցիկ ապագայի կարևորագույն գրավականը լավ ուսումն է:

Գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ արդի ժամանակաշրջանում կյանքի բոլոր ոլորտներում փոփոխություններն արագ են ընթանում և պահանջում են լուրջ, արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Ժամանակակից աշխարհում գիտական նվաճումներին տիրապետելը ոչ թե կարևոր է, այլ՝ անհրաժեշտ: Այս ամենին հասնելու հիմնական ճանապարհը դպրոցական որակյալ կրթություն ապահովելն է: Արագ փոփոխվող աշխարհը իր անմիջական ներգործությունն է ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Այսօր, առավել քան երբևէ, որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է: Դպրոցի առաջ խնդիր է դրվում աշակերտներին պատրաստել կյանքի ու աշխատանքի համար լիարժեք մարդիկ՝ նրանց տալով բավարար գիտելիքներ: Դպրոցի գործունեության նպատակը անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է:

Ժողովրդավարության ճանապարհով շարժվող մեր պետության համար կրթությունը կարևոր դերակատարություն ունի:Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին պատրաստ մարդու ձևավորումը, ով կլինի հայրենիքի ճակատագրով մտահոգ և պատրաստ դիմակայելու կյանքի դժվարություններին: Ուժեղ Հայաստան ունենալու հիմքը դպրոցն է, որը պետք է դաստիարակի հայրենասեր, գիտակից,տրամաբանող, բարի, անիվ, բարոյական և մարդկային բարձր որակներով օժտված, սեփական իրավունքներն ու պարտականությունները գիտակցող սաներ:

2.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցը հիմնադրվել է 2001 թվականին:

<<Պուշկինոյի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը 20017 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում:Դպրոցի փոփոխված կանոնադրությունը հաստատվել է 24.06.2022 թվականին:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.05.2011 թվականի N 0248 և 0242 և 617-Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- Տարրական ընդհանուր -41 սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր -53 սահմանային տեղով

Դպրոցը տիպային շենք է:

Դպրոցում առկա են 7 դասասենյակներ, գրադարան, ուսուցչանոց, ճաշասենյակ, 1 սանհանգույց, կից շինություն՝ սանհանգույց: Զբաղեցնում է 348,3 քառ. մ մակերես 1հա հողամասով: Դպրոցում կան՝ 1 վարչական, 17 մանկավարժական, որոնցից 3-ը՝ ԴԱԿ, ուսուցչի օգնական, զինղեկ, 7 ուսումնաօժանդակ հաստիքներով աշխատողներ: Ուսուցիչներն աշխատում են միջին ծանրաբեռնվածությամբ: Աշակերտների ընդհանուր թիվը հունվարի 1-ի դրությամբ կազմում է 45, այժմ /սեպտեմբերին/՝ 41, որոնցից երկուսն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող **իրավական ակտերը** (դպրոցի կանոնադրություն, օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), նորմատիվ փաստաթղթերի վարումը.

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա իր գործունեության համար անհրաժեշտ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկում առկա բոլոր փաստաթղթերը և պետք է ճշտությամբ կատարի դրանց վարման գործընթացը: Ուսումնական հաստատությունը իր իրավասության

սահմաններում պետք է մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Ուստի նպատակ ենք սահմանում ապահովել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:

Պուշկինոյի հիմնական դպրոցն ունի ԿԳՄՄՆ կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան՝

1. Պետական գրանցման վկայական
2. Դպրոցի կանոնադրություն
3. Լիցենզիա՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանի և սահմանային տեղերի
4. Դպրոցի զարգացման ծրագիր
5. Առարկայական ծրագրեր
6. Ներքին կարգապահական կանոններ
7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
8. Դպրոցի շենքի սեփականության վկայական
9. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
10. Սովորողների շարժի մատյան
11. Սովորողի անձնական գործ
12. Աշխատողի անձնական գործ
13. Աշխատողների հրամանագիրք
14. Աշակերտների հրամանագիրք
15. Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան

16. Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյաններ

17. Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ

18. Հաստիքացուցակ

19. Տարիֆիկացիոն ցուցակ

Դպրոցի ամենօրյա գործունեությունը կարգավորող փաստաթղթերը լրացվում են՝ համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդմիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատու անձը:

Դպրոցի շենքային պայմաններն են՝

Շենքային պայմանները	Քանակը	Մակերեսը՝ Քառ. մ	Փաստացի վիճակը
Տնօրենի կաբինետ	1	9.5816 մ^2	գերազանց
Ուսուցչանոց	1	31.3591 մ^2	գերազանց
Դասասենյակ	7	14.482; 31.2477; 12.644; 30.9692; 31.5262; 33.36; 33.42 մ^2	գերազանց
Պահեստ	1	9.154 մ^2	բավարար
Ուսուցիչների համար զուգարան /ներսում/	1	2.4 մ^2	վատ

Սովորողների համար զուգարան /դրսում/	2	15.84 մ²	վատ
Ճաշարան	1	16.8 մ²	լավ
Սննդամթերքի պահեստ	1	7.14 մ²	գերազանց

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան՝

Դպրոցում չկան մարզադահլիճ, մարզագույք, լաբորատորիա, լաբորատոր սարքեր և նյութեր: Այդ իսկ պատճառով չկա հարուստ նյութատեխնիկական բազա:

2023 թվականի փետրվարից ստանձնել եմ տնօրենի պաշտոնակատարի պարտականությունները և սույն զարգացման ծրագրով **պարտավորվում եմ բավարար վիճակում գտնվող գույքը փոխարինել նորով:**

Գույք,սարքավորումներ	Քանակը	Վիճակը
համակարգիչ	15	լավ
պլանշետ	8	լավ
պրոյեկտոր	1	գերազանց
տպիչ	1	բավարար
սկաներ	1	բավարար
Աշակերտական սեղան,աթոռ	44	լավ
Աշ. սեղան	6	բավարար

աթոռ	9	բավարար
գրատախտակ	7	լավ
պահարան	4	լավ
պահարան	5	բավարար
գրապահարան	2	գերազանց
Պահարան մետաղյա	2	լավ
Ուսուցչական սեղան	7	լավ
աթոռ	20	լավ
Մեծ սեղան	1	գերազանց
Մեծ սեղան	1	բավարար
Փափուկ կահույք	1	բավարար
Լվացարան սեղան	1	գերազանց
Լվացարան	1	գերազանց
լվացարան	1	բավարար
Ճաշարանի պահարան	3	գերազանց
սառնարան	2	գերազանց
ջրատաքացուցիչ	1	լավ
զուգարանակոնք	1	բավարար
Հակահրդեհային վահանակ	1	լավ
փոշեծծիչ	1	լավ

Ջրի բաք	1	լավ
պոմպ	1	լավ
սանդուղք	1	լավ
էլեկտրատաքացուցիչ	6	բավարար
անկյունահատիչ	1	չաշխատող
շաղափիչ	1	չաշխատող
ռանդա	1	լավ
չափաերիզ	1	լավ
մուրճ	1	լավ
սղոց	2	բավարար
հարթաշուրթ	1	լավ
աքցան	3	լավ
դուր	4	լավ
պտուտակ	3	լավ
թի	1	լավ
բենզնասղոց	1	չաշխատող

Կառավարման և խորհրդակցական մարմինները

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենքով սահմանված կարգով:

Պուշկինոյի պրոցում գործում են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները.

- Կառավարման խորհուրդ (միացյալ՝ Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի և Ամրակիցի հիմնական դպրոցի հետ),
- Մանկավարժական խորհուրդ,
- Ծնողական խորհուրդ,
- Աշակերտական խորհուրդ:

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը՝ մշակված օրինակելի կանոնադրությունների հիման վրա: Կարևորում եմ բոլոր խորհուրդների ինքնավարությունը, իրենց գործողություններում ազատ լինելու հնարավորությունը , բացառելով դրանց ձևականությունը, քանզի խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունից է կախված դպրոցի վարկանիշը:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները.

- նյութատեխնիկական բազայի հարստացման,
- հովանավորներ փնտրելու,
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացման,
- ծնողական խորհրդի գործունեության,
- ծնողական խորհրդի առաջարկությունները լսելու,

- դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկման,
- զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցելու,
- համայնքի հետ արդյունավետ համագործակցելու,
- Լավ աշխատողներին խրախուսելու, կամ սեփական աշխատանքում ծուլացող աշխատողին նկատողություն անելու,
- Տնօրենի և խորհրդակցական մարմինների հաշվետվությունները լսելու, քննարկելու,
- հաստիքացուցակը և տարիֆիկացիոն ցուցակը հավանության արժանացնելու գործում:

Կարևորում եմ մանկավարժական խորհուրդի գործունեությունը, քննակումները, որոշումները, հավանությունը տարեկան աշխատանքային պլանի, ուսումնական պլանի, դասաբաշխման և այլ հարցերի շուրջ: Կարևորն այն է, որ մանկավարժական խորհրդի անդամները միշտ համոզված լինեն, որ տնօրենը հաշվի կառնի իրենց առաջարկությունները, և քննարկումները կլինեն ոչ ձևական, իսկ ընդունված որոշումները՝ արդարամիտ:

Կարևորում եմ առարկայական մեթոդական միավորումների կողմից առանձնակի հետևողականությամբ իրականացվող գործառույթները:

Առարկայական մեթոդմիավորումները հանգամանորեն պետք է վերլուծեն նախորդ տարվա հաշվետվություններն ու վիճակագրությունները, կազմեն նոր ուստարվա աշխատանքային պլանները՝ առաջնորդվելով առաջավոր փորձի փոխանակմամբ:

Յուրաքանչյուր դպրոցի համար լուրջ ձեռքբերում կլինի ծնող-դպրոց կապի ամրապնդումը, երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորումը:

Ծնողական խորհուրդը մեծ ներգրավվածություն կունենա սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներում,կաջակցի ուսումնանյութական բազայի հարստացմանը, գեղագիտական, ճանաչողական և ազգային մշակութային արժեքների գնահատմանն ու պահպանմանն ուղղված արշավների և էքսկուրսիաների, շաբաթօրյակների կազմակերպմանը: Պետք է հասնել նրան, որ ծնողական խորհուրդը միշտ սիրով արձագանքի դպրոցում իրականացվող

աշխատանքներին, կյանքի կոչի այն ծրագրերը, որոնք նպաստում են երեխաների կրթության արդյունավետության բարձրացմանն ու դաստիարակությանը: Կարևոր է, որ ծնողը հավատա և վստահի դպրոցի ղեկավարությանը, համոզված լինի, որ իր երեխան ապահով ձեռքերում է, բացառված են հոգեբանական ճնշումները, վիրավորական խոսքերը, դրամահավաքությունը, բռնությունը, օտարումն ու հալածանքը:

Իմ պատկերացմամբ ծնողական խորհուրդը մեծ դեր ունի դպրոցի ընդհանուր տեսլականի ձևավորման հարցում: Ծնողական խորհրդի աջակցությամբ յուրաքանչյուր կիսամյակում կհրավիրեմ ընդհանուր ծնողական ժողով: Ծնողներին կներկայացնեմ կատարված ու կատարվելիք աշխատանքները, կլսեմ նրանց առաջարկները դպրոցի գործունեության մասին, դասավանդող ուսուցիչներին խրախուսելու մասին:Ծնողական և աշակերտական խորհրդի համատեղ նիստերում կքննարկեմ նրանց հուզող հարցերը: Կկազմակերպեմ արշավներ ու էքսկուրսիաներ՝ ներգրավելով բոլոր ծնողներին:

Բացառում եմ ծնողական խորհրդի կեղծ ընտրությունն ու ձևական գործունեությունը: Ծնողների հետ տարվող աշխատանքում կձեռնարկեմ հետևյալ միջոցառումները.

- Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադասիարակչական աշխատանքների մասին,
- Ծնողներին ներառել դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպմանը, արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին,
- Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը,
- Ծնողներին ներառել երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,
- Ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ, փորձել միասին գտնել խնդիրների լուծման ուղիներ, գործել բաց, թափանցիկ,
- Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, կինոդիտումներ,

- Ծնողներին մասնակից դարձնել դպրոցում կազմակերպվող աշխատանքներին, միջոցառումներին, շաբաթօրյակներին, էքսկուրսիաներին ու արշավներին:

Օրինակելի կանոնադրության համաձայն ձևավորված **աշակերտական խորհուրդը** իրականացնում է բազում գործառույթներ՝ պահպանելով իր իրավունքներն ու պարտականությունները: Երեխաների դաստիարակության գործում մեծ է ինքնակառավարման դերն ու նշանակությունը, և վաղ տարիքից պետք է նրանց մասնակից դարձնել հասարակական գործունեությանը: Դպրոցում երեխան պետք է իրեն ապահով զգա, վստահ լինի, որ ինքն այդտեղ հարգված է, սիրված: Յուրաքանչյուր երեխա ունի կրթության իրավունք, պետք է պատասխանատվությամբ կատարի պարտականությունները և պահպանի ներքին կարգապահական կանոնները:

Յուրաքանչյուր տարվա սկզբում հետևողական կլինեմ աշակերտական խորհրդի կազմավորմանը՝ ըստ օրինակելի կանոնադրության: Կհետևեմ մասնագիտական հանձնախմբերի ձևավորմանն ու գործառույթների ճիշտ իրականացմանը: Չեմ հանդուրժի սուտը, կեղծիքը, ձևականը: Աշակերտական խորհրդի ակտիվ գործունեության շնորհիվ աշխատանքների կազմակերպմանը կներառվեն բոլորը: Միասնական ուժերով կհամագործակցեն մանկավարժական, ծնողական և կառավարման խորհուրդների հետ, համատեղ նիստերում կքննարկեն աշխատանքների արդյունքները:

Հաշվի կառնեմ աշակերտական խորհուրդի առաջարկությունները, կհետևեմ ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, ԱԽ-ի հետ կպայքարեմ ուշացումների, անհարգելի բացակայությունների դեմ: Կկազմակերպվեն միջոցառումներ,սպորտլանդիաներ, հանդիպումներ, կինոդիտումներ, ճանաչողական այցեր: Կկազմակերպեմ զրույցներ առողջ ապրելակերպի, ՄԻԱՎ-ի, ՁԻԱՀ-ի, վտանգավոր սովորույթների / թմրամիջոցներ, ալկոհոլ, ծխախոտ/ վերաբերյալ: Հաճախակի կկազմակերպեմ հանդիպում անչափահասների տեսչության հետ, նրանց աջակցությամբ կպայքարեմ թրաֆիքինգի և վնասակար ազդեցությունների դեմ: Կարևորելով աշակերտական խորհրդի ինքնակառավարումը՝ կաջակցեմ նրանց բոլոր նախաձեռնությունները:

Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Որպես դպրոցի տնօրեն պետք է ժամանակին միջոցներ ձեռնարկել՝ խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով կարևոր եմ համարում յուրաքանչյուր խորհրդակցական մարմնի համար սեմինարների կազմակերպումը՝ տարբեր բովանդակությամբ:

Համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը:

Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին /տոնական միջոցառումներ, հիշատակի, եկեղեցական տոներին /: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ Գիտելիքի օր , Վերջին զանգ, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին/ : Դպրոցը մասնակցում է համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության: . Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը: Դպրոցն իրականացնում է << Կլիմայի փոփոխությունը>> թեմայով նախագծային աշխատանքը, որտեղ ապահովված է համայնք-դպրոց կապը:

Դպրոցը համագործակցում է Պուշկինոյի զորամասի հետ:

Որպես տնօրեն պարտավորվում եմ մշտապես **համագործակցել** ՝

- ծնողական և կառավարման խորհրդի հետ,հրավիրել ծնողական ժողովներ, հաստատության հաշվետվությունները հասանելի դարձնել հաստատության շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողներ, համայնք,
- մասնակցել դրամաշնորհային ծրագրերի
- համագործակցել « Կզնակ» ,«Այբ », <<ԳԹԿ>>,«Մասնակցային դպրոց» կրթական համալիրների հետ,

- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ, www.facebook.com/photo/?fbid=5556871241075016&set=pcb.5556873937741413

  ՀՀ կառավարության հետ, https://www.facebook.com/photo/?fbid=430279672649923&set=pcb.430289642648926
- ԿԳՄՄՆ-ի հետ,
- Լոռու մարզպետարանի հետ,
- համայնքի ղեկավարության հետ, https://www.facebook.com/photo/?fbid=6059507030811432&set=pcb.6059507227478079
- Ստեփանավանի ոստիկանության անչափահասների բաժնի հետ:

  Դպրոցը սոցիալ –մշակութային կրթօջախ է, մշտապես համագործակցում է համայնքի ուսհաստատությունների հետ: Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունն ապահովելու նպատակով՝ նախատեսել ենք հոկտեմբեր ամսում համայնքի յոթ գյուղերի աշակերտների միջև կազմակերպել սպորտլանդիա:

Մանկավարժական համակազմը

Դպրոցի՝ որպես մեկ ամբողջական օրգանիզմի, լավ աշխատանքի գրավականը տնօրենության, ուսուցիչների, աշակերտների և ծնողների միջև առողջ մարդկային փոխհարաբերություններն են: Կարևորում եմ այս բոլոր կողմերի հարգալից վերաբերմունքը միմյանց նկատմամբ:

Տվյալներ 2023 թ. սեպտեմբերի դրությամբ.

Վարչական աշխատողներ	1
Սովորողների թիվը	41
Ուսուցիչների ընդհանուր թիվը	17
Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ	17

Տարրակարգ ունեցող ուսուցիչներ	1
Հոդված տպագրած ուսուցիչներ	1
Կամավոր ատեստավորված ուսուցիչներ	0
Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ	3
Առարկայական մ/մ	3
Գրադարանավար	1
ԴԱԿ	1
Ուսուցչի օգնական	1
Զինղեկ	1
Օպերատոր	1
Հաշվապահ	1
Սպասարկող անձնակազմ	5

Դպրոցում դասավանդում են բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող և ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ, որոնք, մեծամասամբ, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ են: • Մեկ ուսուցիչ մեթոդական հոդված է տպագրել: Դպրոցի ուսուցիչները օգտագործում են էլեկտրոնային կրթական ռեսուրսները `armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram, imdproc.am և այլն: Դպրոցի ուսուցիչները վերապատրաստումներ են անցնում ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում, հեռավար դասընթացների ժամանակ օգտվում են teams հարթակից: Դպրոցում իրականացվում է աշակերտակենտրոն ուսուցում: Առանձին մանկավարժներ ընդգրկված են մի շարք կրթական ծրագրերում: Դպրոցի 1 ուսուցիչ ստանում է որակավորման առաջին աստիճանի տարրակարգ Դպրոցում պարբերաբար իրականացվում են փոխադարձ դասալսումներ: Այս պահին հայտարարված է թափուր տեղի մրցույթ ինֆորմատիկայից և աշխարհագրությունից:



Նորարարություն և տեխնոլոգիաներ

Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Անհրաժեշտ է սեմինարի կամ վերապատրաստման դասընթացների միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Բոլոր ուսուցիչները պետք է ժամանակ ունենան նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու, արդի պահանջներին համապատասխան մոտեցումները վերանայելու համար: Տնօրենը պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել ու անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ:

Ցանկալի է, որ դպրոցը ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն՝ տարածելով հաջողված փորձի արդյունքները: Այս հիմնախնդիրները լուծելու նպատակով հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով

ապահովել սովորողների անհատական առաջընթացը: Այսօրվա դպրոցը կարող է հաջողության հասնել այն դեպքում, եթե այն ամեն առումով նորարական է: ՏՀՏ-ի կիրառուումն ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում հնարավորություն է տալիս ավելի հարուստ, դինամիկ և տպավորիչ ուսումնական նյութեր ստեղծելու և ուսումնական բովանդակությունը դարձնելու ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը պասիվ տեղեկատվություններ ստանալու փոխարեն կարող է փոփոխել ու ստեղծել ուսումնական նորարարություններ: ՏՀՏ-ի կիրառումը հնարավորություն է տալիս սովորողների մոտ ուսումնական գործընթացի ժամանակ ակտիվացնելու վիզուալ հիշողությունը, վերլուծական և ստեղծագործական միտքը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ 30 ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում:

«ԱՐՄԱԹ» ինժեներական լաբորատորիայի ներդրումը բավականին լուրջ քայլ է դպրոցի աշակերտների ապագա մասնագիտական կողմնորոշման հարցում: Հայաստանը այս հարցում ունի տաղանդավոր սաներ բացահայտելու հեռանկար, և այս լաբորատորայի շնորհիվ աշակերտները հնարավորություն ունեն փոքր տարիքից ծանոթանալու ծրագրավորմանը, որը կօգնի հետագայում ճիշտ մասնագիտություն ընտրելուն:

ՏՀՏ տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են նաև դասապրոցեսի ընթացքում՝ տեսադասերի, ինտերակտիվ վարժությունների, առարկայական սահիկաշարերի պատրաստման և ցուցադրության միջոցով: Սակայն, համակարգչային տեխնիկայի ոչ բավարար քանակը թույլ չի տալիս լիովին կիրառել ՏՀՏ տեխնոլոգիաները և մեթոդները:

Ելնելով արտակարգ իրավիճակի պայմաններում հեռավար ուսուցում կազմակերպելու հրամայականից՝ ուսուցիչների մոտ բարելավվել է տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատանքի հմտությունները, սակայն դեռևս լուծված չէ ինտերների հզորացման հարցը:

Որպես տնօրեն նախատեսում եմ դասասենյակների կահավորում՝ շարժական գույքով(սեղան-աթոռներ), բազմաֆունկցիոնալ կահույքով, ՏՀՏ գործիքներով, բացօթյա էկոդասարանի բացում, փորձարարական ջերմոցի ստեղծում, կոմպոստի պատրաստում և պատրաստման եղանակի մասին համայնքի բնակիչներին իրազեկում բուկլետների միջոցով:

Աշակերտական համակազմը

Ներկա պահին աշակերտների թիվն ըստ դասարանների /24.05.2023թ./՝

Դասարանը	Սովորողների թիվը
1-ին դասարան	2
2-րդ դասարան	6
3-րդ դասարան	7
4-րդ դասարան	2
5-րդ դասարան	7
6-րդ դասարան	3
7-րդ դասարան	8
8-րդ դասարան	5
9-րդ դասարան	4
ընդամենը	44

Սոպտեմբերի մեկից առաջին դասարան ընդունվող աշակերտների քանակն ըստ ծնողի դիմումի /07.08.2023թ. դրությամբ/՝ 2աշակերտ: Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին (սովորողներին) ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ: Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գտելիքների ստուգում չի թույլատրվում, սակայն իրենց գործին լավատեղյակ մանկավարժները ի սկզբանե պետք է հաշվի առնեն սովորողների նախնական գիտելիքները, մտավոր զարգացվածությունը և զարգանալու հույսերը, կարևորեն տարիքային հոգեբանությունը և ընտանեկան վիճակը, կարողանան ամեն նորեկ երեխայի շրջապատել համապատասխան ուշադրությամբ և հոգատարությամբ, քանզի ամեն վերաբերմունք ազդում է երեխայի սովորելու արդյունավետության վրա: Այս գործում

շատ եմ կարևորում բազմամասնագիտական թիմի աշխատանքը: Համապատասխան մասնագետներն անմիջապես պետք է դիտարկեն և արդյունքները ներկայացնեն տնօրենությանը: Աջակցող թիմի աշխատանքի նպատակն է տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն և օգնել ուսուցիչներին՝ լուծելու դասարանում ի հայտ եկած խնդիրները:



Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի ռազմավարական կարևորագույն խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է: Երեխայի դաստիարակության հիմնական պատասխանատուն ծնողն է, ով իր սեփական օրինակով պետք է սերմանի երեխայի մեջ աշխատասիրություն, բարոյականություն, հայրենասիրություն:

Այնուհանդերձ, երեխայի դաստիարակության գործում դպրոցի ու մանկավարժի դերն առանձնահատուկ կարևոր է:

Որպես տնօրեն պետք է քայլեր ձեռնարկեմ սովորողների դաստիարակության կատարելագործման ուղղությամբ՝

- ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,
- առարկայական դասընթացներում լուրջ ուշադրություն դարձնելով թեմայի դաստիարակչական կողմին,
- արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություններ տալով,
- գրքի նկատմամբ սեր առաջացնելով,
- ծնող-դպրոց կապը հզորացնելով,
- մեծերի նկատմամբ հարգանք ձևավորելով,
- աշխատասիրություն ձևավորելով:

Դաստիարակչական աշխատանքներն ամրապնդելու նպատակով կկազմակերպեմ՝

- ՝ շաբաթօրյակներ, https://www.facebook.com/photo/?fbid=6027225554039580&set=pcb.6027226244039511
- ընթերցումներ, գրքի քննարկումներ,
- զրույցներ, բանավեճեր,
- տարբեր սպորտային մրցույթներ,
- դպրոցում կստեղծեմ պետական խորհրդանիշների հանրահռչակման և քաղաքացիական դաստիարկության ծրագիր,
- հանուն ազգային հոգևոր- մշակութային արժեքների ճանաչման ու պահպանման կկազմակերպեմ արշավներ, էքսկուրսիաներ, միջոցառումներ,
- ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդման նպատակով կկազմակերպեմ միջոցառումներ, հուշարձանների և հուշաղբյուրների բարեկարգման աշխատանքներ, կհամագործակցեմ գյուղի տարածքում գտնվող զորամասի հետ,
- կհետևեմ դասղեկի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,
- հետևողական կլինեմ, որպեսզի անցկացնեն դասղեկի ժամեր, որոնց ընթացքում քննարկեն ուսումնադաստիարակչական հարցեր,
- կստեղծեմ արտադասարանական, երկարօրյա խմբակներ,
- կկազմակերպեմ տարբեր սեմինարներ ու հանդիպումներ:

Երեխայի դաստիարակության աշխատանքներում շեշտը պետք է դնել նրա վարքի դրդապատճառների ուսումնասիրության և դրանք ճիշտ հասկանալու վրա:

Պետք է կարողանալ ներթափանցել մանկական ապրումների աշխարհը, համագործակցել ծնողի հետ՝ ներգրավելով ծնողներին արտադպրոցական, արտադասարանական աշխատանքներում:

Այս ամենին հասնելու համար ամենօրյա կարգավորված, պլանավորված հետևողական աշխատանք է պետք, որի հիմքը հանդուրժողականությունն ու մարդասիրությունն է, արդարամտությունն ու անաչառությունը, ինչու չէ, նաև՝ սեփական օրինակը:

Կրթության որակն ըստ չափորոշչային պահանջների

Կրթության որակը պակաս կարևոր չէ դաստիարակությունից: Ցավոք սովորողների առաջադիմությունը ցածր է, սովորողների մոտ նկատվում են կարծրատիպեր սեփական ունակությունների նկատմամբ, կապակցված խոսքի ոչ բավարար զարգացում, աշխատունակության անկում:





Կրթության որակը բարձրացնելու նպատակով նախ պետք է հասկանալ և գնահատել կրթության որակի փաստացի վիճակը: Բազմաթիվ դասալսումները, ներքին և արտաքին ստուգումները, վիճակագրական վերլուծությունները և արդյունքների համադրումը թույլ կտան գնահատելու առկա իրավիճակը:

Կրթության որակը կարելի է բարձրացնել աշխատանքների ճիշտ պլանավորմամբ, դասի նպատակի իրագործմամբ ու ակնկալվող արդյունքներին հասնելով: Կարևոր գրավականներից մեկը մանկավարժների կողմից աշխատանքների կազմակերպման հատուկ մեխանիզմների առկայությունը, ինչպես նաև դրանց արդյունքերի մշտադիտարկման վերլուծությունն է, որոնց միջոցով կբացահայտվեն թերությունները և կմշակվեն թերությունների շտկման ուղիներ:

Որպես տնօրեն հնարավորինս մոտ կանգնած կլինեմ թե՛ ուսուցիչներիս, թե՛ աշակերտներիս. ամիսը մեկ կհրավիրեմ մեթոդմիավորման նիստեր, որոնց ընթացքում կքննարկվեն առարկաների ուժեղ և թույլ կողմերը, կմշակվեն անհրաժեշտ քայլեր: Այս

աշխատանքներում, օգտագործելով երիտասարդների նորարարական ավյունը, ինչպես նաև փորձառու մասնագետների խորհուրդները, կմշակվեն թեստային առաջադրանքներ, կկազմակերպվեն վիկտորինաներ, բաց դասեր:: https://www.facebook.com/photo/?fbid=6086321991463269&set=pcb.6086322304796571

Ուսման մեջ չառաջադիմող սովորողներին կաջակցեն առավել լավ սովորող ընկերները, **երկարօրյա խմբակի** ուսուցիչները: Պետք է հասնել այն ամենին, որ յուրաքանչյուր սովորող, հասկանալով կրթության դերը, գիտակցաբար բարձրացնի իր առաջադիմությունը: Կհասնեմ նրան, որ սովորողների 40-50 տոկոսն ունենա բարձր առաջադիմություն : Կրթական գործընթացում հանձնարարությունները, կազմակերպչական գործողությունները կկատարվեն պատշաճ կերպով, աշակերտների մոտ կնկատվեն անհատական ձեռքբերումներ:

Ուշադրություն պետք է դարձնել սովորողների տրամաբանության զարգացմանը և առարկայական օլիմպիադաներին դպրոցականների մասնակցությանը, ինչպես նաև <<Կենգուրու>>, <<Մեղու>> մրցույթներին մասնակցությանը: Ցավոք՝ չունենք առարկայական օլիմպիադաներին, տարբեր մրցույթների, ինչպես նաև ԱՐՄԱԹ ինժեներական ծրագրի կողմից կազմակերպված օլիմպիադային մասնակցած սովորողներ: Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է վերահսկողություն՝ սկսած մեթոդ միավորումների աշխատանքներից: Յուրաքանչյուր ամսվա նիստում քննարկել կատարված դասալսումները, ուշադրության կենտրոնում պահել ուսուցչի օրվա պլանները, օգնել սկսնակներին, պահանջել կատարելու փոխադարձ դասալսումներ՝ առաջավոր փորձի փոխանակման նպատակով:

Ուսման որակի բարելավման աշխատանքները պետք է սկսեմ տարրական դպրոցից: Նախ՝ կուսումնասիրեմ և կգնահատեմ կրթական ծրագրերը, դասագրքերը, հատկացված ժամաքանակը: Տարրական դասարանների սովորողների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով դասերին կկազմակերպվեն ֆիզկուլտ-դադարներ, ուշադրության կենտրոնում կլինեն ֆիզկուլտուրայի դասերը, որոնք լիարժեք դասավանդելու համար չկա մարզադահլիճ և բավարար մարզագույք: Միջին դասարաններում կկատարեմ դասալսումներ, որոնք կնպաստեն հիմնական դպրոցի ավարտական քննություններին նախապատրաստվելուն:

4-րդ, 9-րդ դասարաններում հավուր պատշաճի կազմակերպվում են սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունները:

2023-2024 ուստարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվելու է Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջների հիման վրա, ինչը, վստահաբար, կհանգեցնի

կրթության որակի բարձրացմանը և ուսուցիչների կարողությունների, հմտությունների զարգացմանը:



Կրթության որակի վրա մեծ ազդեցություն ունի մանկավարժների մեթոդապես լավ պատրաստված լինելը: Կարևոր է, որ նրանց կողմից ճիշտ պլանավորվեն դասերն ու միջոցառումները և համապատասխանեն նպատակին, ամեն օր ներկայանան օրվա պլանով՝ գրված չափորոշչային պահանջներին համապատասխան: Օրվա պլանում պետք է նշված լինեն կատարվելիք աշխատանքները ԿԱՊԿՈՒ սովորողների հետ:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, խորհրդակցական մարմինների անդամների, ուսուցչի օգնականի և դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ կտարվեն սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ, կկազմակերպվեն առանձին հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն կդարձվի **հալածանքի , օտարման և բռնության դրսևորումների բացառմանը,** դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանմանը:

2023-2024 ուստարուց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում սոցիալապես անապահով ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով նախատեսվում է կազմակերպել երկարօրյա ուսուցում՝ սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա: Դպրոցում **երկարօրյա ուսուցման կազմակերպման** առջև դրվելու են հետևյալ խնդիրները.

- տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում այդ գործընթացները կազմակերպել դպրոցի ուսումնանյութական բազայի հիման վրա,
- արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով ստեղծել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ,
- ԿԱՊԿՈՒ (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) սովորողների համար մատուցել լրացուցիչ կրթական ծառայություններ

2023-2024 ուստարուց դպրոցի 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանը կազմվելու է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված հանրակրթության պետական չափորոշչի համաձայն: Նոր ուստարում այդ դասարաններում դասավանդող ուսուցիչները անցել են համապատասխան վերապատրաստում:

Դպրոցի ուսումնական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է: Դպրոցի ուսումնական պլանը պետք է կազմվի ըստ սովորողների և ոչ թե ուսուցիչների կարիքների: Ակնկալում եմ դպրոցական ուսպլանում 5-րդ դասարանին հատկացվող դպրոցական բաղադրիչը հատկացնել անգլերեն լեզվին: Դրա արդյունքում կունենանք աշակերտների ներհոսք և աշակերտները կունենան ուսումնական հաջողություններ, որոնք տոկոսային հարաբերությամբ կներկայացվեն դպրոցի ներքին գնահատման ժամանակ:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահովում

Դպրոցում ստեղծված է բազմակարծիք միջավայր ՝ մի շարք կոմպետենցիաների ապահովմամբ ՝

- ազատ խոսքի կոմպետենցիա
- քննադատական դատողության կոմպետենցիա
- համատեղ գործողությունների, նպատակների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման և որոշումների ընդունման կոմպետենցիա

Դպրոցում սովորում են սոցիալական տարբեր խմբերի պատկանող երեխաներ:Կառավարման կրթական բոլոր գործընթացներում տիրում է համագործակցության, միմյանց օգնելու և արժևորելու մթնոլորտ, կարևորվում է սովորողի շահը, նրա անհատականությունը, առանձնահատկությունները, անկախ սոցիալական վիճակից, ազգային, սեռային պատկանելիությունից: Որոշումների կայացման գործընթացներին դպրոցն ընդունում է բոլորի մասնակցությունը դպրոցի կառավարմանը և կրթական գործունեությանը, մշտապես հաշվի են առնվում աշակերտական, մանկավարժական համակազմի, ուսումնաօժանդակ աշխատողների կարծիքները: Փոխադարձ հարգանք կա սովորողների և ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնողների միջև: Դպրոցը խթանում է բազմազանությունը սովորողների, անձնակազմի և ավելի լայն դպրոցական համայնքի միջև: Այն նպաստում է ներառականությանը՝ ստեղծելով անվտանգ և հարգալից միջավայր, որը գնահատում և հարգում է տարբեր մշակութային, էթնիկական, սոցիալ-տնտեսական և կրոնական ծագում ունեցող անհատներին Դպրոցում սովորողների և աշխատակիցների առողջության և անվտանգության պահպանման համար կան բավարար պայմաններ, կազմակերպվում են համապատասխան միջոցառումներ: Ուշադրություն է դարձվում ժողովրդավարական կառավարման սկզբունքներին:

Դպրոցում ապահովված է համագործակցային հարաբերությունների մթնոլորտը, թիմային աշխատանքը՝ թե մանկավարժական աշխատողների, թե սովորողների շրջանում: Դպրոցն ապահովում է մասնագիտական աճի հնարավորություն ուսուցիչների համար՝ տարբեր կրթական ծրագրերի, վերապատրաստումների, սեմինարների մասնակցություն:

Դպրոցի սոցիալապես անապահով, ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների երեխաները օգտվում են դասագքերի գումարի զեղչից:

Պուշկինոյի հիմնական դպրոցն իրականացնում է **ներառական** կրթություն: 41 սովորողներից 2-ը ԿԱՊԿՈՒ սովորողներ են, որոնցից երեքն ունեն մտավոր թերզարգացվածություն, նրանց համար գրվում է ԱՈՒՊ, որի հիման վրա կազմակերպվում է սովորողների դասարանից դասարան փոխադրումը, իսկ մյուս սովորողն ունի հեմոֆիլիա, նրա համար ԱՈՒՊ չի գրվում, կազմակերպվում է տնուսուցում՝ պահանջված բոլոր փաստաթղթերի հիման վրա: ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկան անհրաժեշտ բոլոր առանձնահատուկ պայմաններ՝ զուգարանին հարմարեցում, թեքահարթակ, սակայն նրանք պարուրված են ջերմությամբ, ընդգրկվում են ուսումնադաստիարակչական միջոցառումներում:

Որպես տնօրեն կլինեմ հետևողական, որպեսզի պատշաճ կազմակերպվեն ներքոբերյալ աշխատանքները.

- Բարելավել ԿԱՊԿՈՒ երեխաների վկայագրման չափորոշիչները, գործիքներն ու մեխանիզմները:
- Ընդգրկել կրթությունից դուրս մնացած ԿԱՊԿՈՒԻ երեխաներին:
- Ընդլայնել համագործակցությունը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների հետ:
- Ժամանակին և ճիշտ լրացվեն ԱՈՒՊ-ները:
- Ստեղծվեն առանձնահատուկ պայմաններ:
- Պաշտպանվի ԿԱՊԿՈՒ սովորողների իրավունքները:
- Ներառվեն դպրոցական միջոցառումներում www.facebook.com/photo/?fbid=6116278641800937&set=pcb.6116279868467481
- Ստեղծվեն **երկարօրյա խմբակներ** և, ծնողի դիմումի հիման վրա,ներառվեն չառաջադիմող, սոցիալապես անապահով ընտանիքների և ԿԱՊԿՈՒ սովորողները:

Աշխատակազմի արժևորման ,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Ուսուցչի գործունեությունը գնահատվում է ըստ նրա կրթության և փորձառության, ըստ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել.

- Ունի բարձրագույն մանկավարժական կրթություն:
- Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա մանկավարժական փորձ:
- Ունենա որակավորման տարակարգ:
- Մասնակցի **կամավոր ատեստավորմանը**:
- Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
- Իր դասավանդած սաների միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ստանալու կամ առարկայական օլիմպիադաներին մասնակցելու կարողությունը:
- Գիտի գնահատման մեթոդաբանությունը և ունի այն ռեալ կիրառելու կարողություն:
- Տիրապետում է իր դասավանդած առարկայի չափորոշիչներին և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշչային պահանջներին համապատասխան:
- Դասապրոցեսի ընթացքում ներգրավում է նաև ԿԱՊԿՈՒ սովորողին:
- Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ:
- Ուսումնասիրում է գոյություն ունեցող առաջավոր փորձը, կիրառում և տարածում իրենը, օգնում սկսնակ ուսուցչին:
- Գիտի տարիքային հոգեբանությունը:
- Կարողանում է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել:
- Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:

- Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները, օրինակելի է:
- Կարողանում է առարկան առավել հետաքրքիր դարձնել:
- Նպաստում է դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը:
- Աշակերտները մասնակցում են օլիմպիադաների և ունենում հաջողություններ:

Կրթության ոլորտի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն, որով պայմանավորված է դպրոցի վարկանիշը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի ռազմավարություններից մեկը որը կարելի է իրականացնել ուսուցչի ատեստավորման,մանկավարժական առաջավոր փորձի կիրառման, բաց դասերի, վիկտորինաների, քննարկումների կազմակերպման, ուսուցչի համար նպաստավոր պայմանների ստեղծման, սկսնակ ուսուցչին աջակցելու,մասնագիտական և մեթոդական օգնություն ցուցաբերելու, խորհրդատվության, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացի ընդլայնման միջոցով: Դպրոցում կարևորվում է անձնակազմի յուրաքանչյուր անդամի դերը , գնահատվում, խրախուսվում ՝ ելնելով աշխատանքի արդյունքից, արձանագրած արդյունավետությունից: Դպրոցը գնահատում է իր աշխատակազմի ջանքերն ու ձեռքբերումները՝ նպաստելով աշխատանքային դրական և մոտիվացնող միջավայրին: Աշխատակազմը խրախուսվում է պարգևավճարներով, որը նպաստում է գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելուն: Դպրոցում և դպրոցից դուրս ստեծվել է ուսուցչի նկատմամբ հարգանքի և վստահության մթնոլորտ, պաշտպանվում է ուսուցչի իրավունքները տարբեր հարթակներում և մակարդակներում: Դպրոցում առկա է անձնակազմի համար ինքնակրթության նպաստավոր պայմաններ, հնարավորություններ: Նորարարությունները խթանիչ ուժ ու հանգամանք են խրախուսման ու արժևորման համար, ըստ որի արժանանում են խրախուսանքի: Խրախուսումն իրականացվում է կրթության կառավարման մարմինների կողմից:

Նախատեսում եմ աջակցել մանկավարժներին՝ ստեղծելով համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար: Դպրոցում աշխատող ուսուցիչներից մեկն արժանացել է որակավորման առաջին աստիճանի տարրակարգի, նախաձեռնող է և պրպտող:Դպրոցի մեկ ուսուցիչ համագործակցում է «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն»- ի հետ՝ իրականացնելով տարբեր օրինակելի միջոցառումներ:

Ուսուցչին գնահատողն, նախ և առաջ, նրա սաներն են, այնուհետև՝ ծնողները, որոնց պահանջով մանկխորհը կարող է խրախուսել լավ աշխատող ուսուցչին: Որպես տնօրեն կանգնած կլինեմ բոլոր ուսուցիչների կողքին, կգնահատեմ նրանց անձնվեր աշխատանքը, կարժևորեմ, կոգևորեմ՝ մասնակցելու **կամավոր ատեստավորմանը**:

Բյուջետային հնարավորություններ

Դպրոցավարության կարևոր հարցերից են բյուջետային հնարավորություններն ու բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև՝ արտաբյուջետային միջոցների ձեռքբերումը: Բոլորին պարզ է, որ դպրոցի բյուջեն սուղ է և հիմնականում սպառվում է հետևյալ հիմնական ծախսերի համար.

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- Եկամտահարկի վճարներ,
- Գրասենյակային և տնտեսական ծախսեր,
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,
- Կապի ծառայությունների ծախսեր,
- Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները, միջոցների սղության դեպքում, սովորաբար ,նվազեցվում են խնայողությունների հաշվին:

Նախորդ երեք տարիների ֆինանսական հաշվետվություն.



3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

Դպրոցն աշխատում է 5-օրյա, միահերթ աշխատանքային շաբաթով:

Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն : Դպրոցում գործում են 3 առարկայական մեթոդ միավորումներ՝

- տարրական կրթության,
- բնագիտական,
- հումանիտար:

Զարգացման ծրագրով նախատեսում եմ բավարարել սովորողների հետևյալ **կրթական կարիքները.**

- հայրենասեր,
- կարողունակ,
- Ապագա քաղաքացու ձևավորում, կյանքի նախապատրաստում,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- մրցունակ,
- ինքնաքննադատական մտածողություն ունեցող,
- համագործակցող,
- արդի մարտահրավերներին պատրաստ,
- սեփական դիրքորոշում ունեցող անձի ձևավորում:

Կրթական կարիքներն իրականացնելու նպատակով պետք է կարևորել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները.

- Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ և օրինակելի փորձի կիրառմամբ:
- Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, նպաստի անհատի ճիշտ ձևավորմանն ու ապագա քաղաքցու կերտմանը, ծառայի անհատին, ժողովրդին, պետությանը: Այն պետք է իրականացվի՝ ապահովելով երեխայի մտավոր, հոգևոր, ֆիզիկական զարգացումն ու առողջության պահպանումը:
- Հանրակրթությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները և զարգացման մակարդակները:
- Հանրակրթությունն իրականացվում է ՀՀ պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով: Այն նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու սերունդներին փոխանցմանը, ազգային ինքնության ու միասնության պահպանմանը: Հանրակրթությունն իրականացվում է ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով իր աշխարհիկ բնույթը, զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի

է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական հայացքներից, սոցիալական ծագումից:

- Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական նախնական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:

- Հանրակրթությունն իրականացնել մանկավարժական առաջավոր փորձի, ուսուցման առավել ակտիվ ու ժամանակակից մեթոդների և ՏՀՏ-ի կիրառմամբ:

Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Դպրոցը, համապատասխան պետության կրթական քաղաքականության սկզբունքներին , իր գործունեությունը իրականացնում է .

▪ Սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին համապատասխան(դասպրոցեսների ընթացքում, ելնելով սովորողների առանձնահատկություններից, շերտավորված աշխատանքների կազմակերպում):

▪ Ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ (կլոր սեղանի հրավիրում, քննարկումների, դասախոսությունների, բաց դասերի, զրույցի բանավեճի կազմակերպում ,ինքնակառավարման շաբաթի կազմակերպում, ԱԽ-ի իրավական և սոցիալական հանձնախմբերը կազմակերպում են քննարկումներ, զրույցներ՝ ուղղված աշակերտների իրավունքների և պարտականությունների ճանաչմանը):

▪ Հայրենասիրական դաստիարակությամբ (միջոցառումներ՝ նվիրված Անկախության օրվան, Բանակի օրվան, հիշատակի օրերին նվիրված բաց դասեր, միջոցառումներ, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում, Պուշկինո համայնքում գտնվող զորամասում կրակային պատրաստություն ,զորամասից հյուրերի ընդունում, նրանց կողմից զրույցներ սովորողների հետ ՝ռազմահայրենասիրական թեմաներով,մասնակցություն համապետական

շաբաթօրյակներին, ծառատունկին):

▪ ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրմամբ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներգրավվածություն դասապրոցեսին, ներդպրոցական , արտադպրոցական աշխատանքներին, ռեսուրս-անկյունում այդ սովորողների հետ բազմամասնագիտական թիմի կողմից տարվող աշխատանքներ):

▪ Համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան(նախագծային աշխատանք `<<Կլիմայի փոփոխությունը>> թեմայով, <<Կոմպոստ – օրգանական պարարտանյութ>> բուկլետների ստեղծում և բաժանում համագյուղացիներին՝ իրազեկման նպատակով:

Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների(դահլիճ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է:

- Պուշկինոյի հիմնական դպրոցի դասասենյակները վերանորոգված են, լուսավոր և ապահովված են անհրաժեշտ օգտագործած գույքով:
- Համակարգչային սենյակում կան աշակերտների միջին խտությանը համապատասխան համակարգիչներ:
- Կան պրոյեկտոր և տպիչ:
- Դպրոցում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորի, որն ապահովված է անհրաժեշտ գույքով:
- Դպրոցում առկա դասասենյակներից մեկը ծառայում է նաև որպես գրադարան, որն ապահովված է դասագրքերով:
- Գրադարանն ունի նաև ժամանակակից գրողների գրքերի կարիք:
  https://www.facebook.com/photo/?fbid=5848387655256705&set=pcb.5848388648589939
- Գրադարանն ունի նորառՃ պահարաններ:

- Դպրոցում բացակայում են լաբորատորիաները, լաբորատոր սարքեր և նյութեր:
- Չկան ՆԶՊ-ի և այլ առարկայական կաբինետներ
- Դպրոցում չկա սպորտդահլիճ, մարզագույք, բարեկարգ մարզահրապարակ www.facebook.com/photo/?fbid=5838973882864749&set=pcb.5838974609531343
- Դպրոցը թեքահարթակներ չունի, թեև իրականացնում է ներառական կրթություն:
- Սանհանգույցը գտնվում է անմխիթար վիճակում և կարիք ունի վերանորոգման:
- Ճաշասենյակն ունի մասնակի վերանորոգման կարիք
- Դպրոցի պարիսպը գրեթե ամբողջությամբ ունի վերականգնման կարիք
- Չկան դարբասներ
- Չկա բուժկետ, օգտվում համայնքի բուժծառայությունից
- Չկա հանդիսությունների դահլիճ:

Դպրոցը պետք է ձգտի, որ ձևավորվեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին: Դպրոցում պետք է ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթը: Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը: Խստորեն վերահսկվում են բացակայությունները, ճշտվում ախտորոշումները: Պահպանվում են հակահամաճարակային կանոնները: Ախտահանվում են դասասենյակները, ճաշարանը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԹՈՒՅԼ ԵՎ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Պուշկինոյի հիմնական դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վեր հանել առկա հիմնախնդիրները:

Դպրոցի շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
• Առկա է վոլեյբոլի, ֆուտբոլի հրապարակի տարածք: • Դասասենյակները վերանորոգված են և լուսավոր, կահավորված են ամենաանհրաժեշտ գույքով պահարաններ, աշակերտական սեղան, աթոռ , ուսուցչական սեղաններ • Որպես գրադարան ծառայում է դասասենյակներից մեկը, կահավորված է նորառաճ պահարաններով, առկա են անհրաժեշտ գրականություն , դասագրքեր • ՏՀՏ միջոցների առկայություն / համակարգիչներ՝ 15 հատ, 2 տպիչ, 1 պրոյեկտոր, 8 պլանշետ/ • Ուսուցչանոցում կա նոր, մեծ սեղան, պահարաններ: • Դպրոցը վերանորոգված է՝ եվրոպատուհաններով և դռներով հանդերձ: • ՝ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա	• Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման անհրաժեշտություն • Անհրաժեշտ է բացօթյա սպորտհրապարակի ցատկատեղի պատրաստում ավազով • Վոլեյբոլի ցանցի ձեռքբերում • Դպրոցի ցանկապատի, դարբասների բացակայություն, բակի և հարակից տարածքի բարեկարգման խնդիրներ, ծառատնկում, ծաղկանոցի ձևավորում • Սանհանգույցների վերանորոգման կարիք • Մարզադահլիճի բացակայություն • Մարզահրապարակի բարեկարգում և համապատասխան մարզագույքի ձեռքբերում • ՏՀՏ-ների ներդրում և կիրառում, ինտերնետ հզոր կապի ապահովում

	• Գազաֆիկացում և լոկալ ջեռուցում • Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն • Աշխարհագրության վերաբերյալ նոր ուսումնական նյութեր • Լաբորատորիաներ՝ համապատասխան գույքով և նյութերով հարուստ • Դասասենյակներում չկան կախիչներ • Ճաշարանում չկա օդակլանիչ • Չկան ժամանակակից գրողների գրականություն • Ուսուցչանոցում կա հին փափուկ կահույք

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր /դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը/

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
• Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն	• Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման

• ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան • Էլեկտրոնային մատյանի վարում ***Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ***	ներկայացնելիս ուսուցիչների և ԱԽ-ի պասիվ մասնակցություն • Նախորդ տարիների կատարած աշխատանքների հաշվետվությունների բացակայություն
• անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետներ • պատասխանատվություն ունեցող ուսուցիչներ • Մշտադիտարկումներ և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ, փոխադարձ	• Միջազգային գիտաժողովներին մասնակցության բացակայություն • Միջազգային մրցույթներին մասնակցության ցածր տոկոս • Հանրապետական և միջազգային սեմինարների, վեբինարների ցածր մասնակցություն • **Կամավոր ատեստավորումից** խուսաբող ուսուցիչներ

դասալսումներ,մեթոդմիավորման նիստեր • Բաց դասեր, միջոցառումներ կազմակերպող ուսուցիչներ • Աշակերտակենտրոն, նորարական մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառող ուսուցիչներ • Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում • Կրթական տարբեր ծրագրերի մասնակցող ուսուցիչ • Նախագծային աշխատանքների կազմակերպողուսուցիչ	

Աշակերտական համակազմ

• Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշ • Ակտիվ մասնակցություն արտադասարանական միջոցառումներին • ԱԽ –ի ակտիվ գործունեություն	• Մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում մասնակցության պասիվություն • **Ցածր առաջադիմություն** • Մասնակցություն ստեղծագործական և սպորտային մրցույթներին • Մասնակցությունը «Կենգուրու» , «Մեղու» հանրապետական մրցույթներին

• Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին • ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում • Հաստատության գործունեության թափանցիկություն • Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգով վերապահված գործառույթների • Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն • Ամենամյա եռակողմ նիստ, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն, ակտիվ ուսուցիչները, ծնողները և աշակերտներն էլ արժանանում են տնօրենի խրախուսանքին /պատվոգիր, շնորհակալագիր/:	• ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում • Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ

Կրթության որակը

• Շրջանավարտների մասնագիտական կողմնորոշում • Ուսուցման նորարական մեթոդների կիրառում • Չափորոշչային պահանջների իրագործում • Միջառարկայական կապերի ապահովում դասապրոցեսի ընթացքում • Դասի նպատակի իրագործում	• Ոչ բոլոր շրջանավարտների գիտելիքների բավարար մակարդակ • Որոշ սովորողների անտարբերություն ուսման նկատմամբ • Գերազանցիկ և առաջավոր սովորողների քիչ քանակ

Հաղորդակցություն, համագործակցություն

• « Կզնակ» ,«Այբ », «Մասնակցային դպրոց» կրթական համալիրների հետ, • «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետ, • ՀՀ կառավարության հետ, • ԿԳՄՄՆ-ի հետ, • Լոռու մարզպետարանի հետ, • Համայնքի ղեկավարության հետ, • Ստեփանավանի ոստիկանության անչափահասների բաժնի հետ:	• Միջազգային բուհերի և կառույցների հետ համագործակցություն • Համագործակցություն ՀԿ-ների հետ

• Նորորոկան մեթոդների կիրառում • Օնլայն հարթակների գործիքաշարերին տիրապետող ուսուցիչներ • Վերապատրաստումներին ակտիվ մասնակցողներ • Դասապրոցեսում ՏՀՏ-ի կիրառում • Մեդիագրագիտություն • Դպրոցն օգտվում է էլեկտրոնային տարբեր կրթական հարթակներից `Microsoft TEAMS	• Օնլայն հարթակների գործիքաշարերին չտիրապետող որոշ ուսուցիչներ • Որոշ ուսուցիչների կողմից ՏՀՏ –ի կիրառման գիտելիքների պակաս և կարծրատիպ • .SMART դասասենյակի բացակայություն • Համակարգիչների և համակարգչային այլ տեխնիկայի պակաս • Ինտերակտիվ գրատախտակի բացակայություն

4.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ . ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ ,ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ եմ ունեցել դպրոցի աշակերտական, ծնողական և մանկավարժական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

1.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Պուշկինոյի դպրոցում աշխատում են բարձրագույն կրթություն ստացած իրենց առարկային տիրապետող մանկավարժներ: Սակայն ժամանակաշրջանի պահանջին համապատասխան ուսուցիչ լինելու համար պետք է մշակել կազմակերպման և ղեկավարման այնպիսի մեխանիզմներ,որոնք ուղղված կլինեն մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը՝

Նպատակ՝ մանկավարժների որակավորման բարձրացում

Խնդիր՝

Մանկավարժական համակազմի մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում , հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների կատարելագործում

Նպատակին հասնելու ուղիները՝

- ապահովել դպրոցի մանկավարժների մասնակցությունը որակավորման բարձրացմանը,
- մեթոդմիավորումների նիստերին ուսումնասիրել մեթոդական գրականություն, որոնք հաստատված են ԿԳՄՄՆ-ի կողմից , վերլուծել, կազմակերպել քննարկումներ ,
- կազմակերպել փոխադարձ դասալսումներ,
- առաջավոր փորձը և մեթոդները փոխանակել և կիրառել պրակտիկ աշխատանքում,
- դպրոցում կազմակերպել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ համացանցից օգտվելու կարողություններ ձևավորելու նպատակով,
- ՏՀՏ-ի և դեդակտիկ պարագաների օգտագործում դասապրոցեսի ընթացքում, միջառարկայական կապի իրականացում
- անցկացնել վաստակավոր և սկսնակ ուսուցիչների մասնակցությամբ համատեղ դասեր,
- բաց դասերի անցկացում,
- դաս-միջոցառումների կազմակերպում,

- ներառարկայական և միջառարկայական մրցույթների, ինտելեկտուալ վիկտորինաների, սպորտլանդիաների կազմակերպում:

Հնարավոր ռիսկեր՝

- ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում լիարժեք օգտվել համակարգիչներից
- թույլ ինտերնետ կապ
- լաբորատորիաների, լաբորատոր նյութերի և սարքավորումների բացակայություն
- մարզադահլիճի և մարզագույքի բացակայություն

Ռիսկերը մեղմացնող գործողություններ՝

- կազմակերպել սեմինարներ մեդիագրագիտության վերաբերյալ
- օգտագործել երիտասարդների ավյունն ու գրագիտությունը ՏՀՏ-ի կիրառման վերաբերյալ՝ մեծահասակներին սովորեցնելու նպատակով
- օգտագործել փորձառու ուսուցիչների առաջավոր փորձը
- ինտերնետ կապի հզորացում

Նյութատեխնիկական հնարավորություններ և անհրաժեշտ պայմաններ՝

- համակարգիչներ
- անհրաժեշտ գրքեր, ձեռնարկներ
- մարզահրապարակ /ոչ բարեկարգված/
- բարոյահոգեբանական մթնոլորտ

Սպասվող արդյունքը՝

- մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում
- մանկավարժների մեթոդական աշխատանքների որակավորման բարելավում
- ունենալ ստեղծագործող և բանիմաց մանկավարժներ

- Ունենալ ՏՀՏ-ից օգտվելու կարողունակ ուսուցիչներ
- Կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների աճ

Արդյունքի գնահատման ռուբրիկ '

Արդյունքը	անբավարար	բավարար	լավ	գերազանց
• մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում				
• մանկավարժների մեթոդական աշխատանքների որակավորման բարելավում				
• ունենալ ստեղծագործող և բանիմաց մանկավարժներ				
• Ունենալ ՏՀՏ-ից օգտվելու կարողունակ ուսուցիչներ				
• Որակավորման տարրակարգ ձեռքբերած ուսուցիչների ավելացում				
• **Կամավոր ատեստավորված** ուսուցիչների ավելացում				

2.ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Նպատակը ՝ Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում

Խնդիր՝ Գիտության և տեխնիկայի արագ զարգացումները, արագ փոփոխվող աշխարհը որակյալ մասնագետների պահանջարկ է առաջացնում: Այդ փոփոխությունները մանկավարժներին նոր պահանջներ են ներկայացնում՝ մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործում, ինչպես նաև ՏՀՏ-ների լիարժեք տիրապետում, նոր չափորոշիչների տիրապետում:

Նպատակին հասնելու ուղիները ՝

- ապահովել մանկավարժների մասնակցությունը մանկավարժական առաջավոր փորձի յուրացման նպատակով իրականացվող վերապատրաստումներին,
- ուսուցիչների ցանկության դեպքում նպաստել նրանց որակավորման բարձրացմանը,
- աջակցել ուսուցչին որակավորման **տարրակարգի** ձեռքբերմանը,
- աջակցել ուսուցչին՝ մասնակցելու **կամավոր ատեստավորման** գործընթացին
- ստեղծել բարոյահոգեբանական մթնոլորտ և հարմարավետ պայմաններ ուսուցչի աշխատանքները կազմակերպելու, գիտահետազոտական պաշխատանքով զբաղվելու համար,
- նպաստել սկսնակ և փորձառու ուսուցիչների փոխադարձ դասալսումների անցկացմանը,
- ապահովել ուսուցիչների մասնակցությունը հերթական ատեստավորմանը ,
- ապահովել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված ձեռնարկներով, մեթոդական գրքերով, դիդակտիկ պարագաներով:

Հնարավոր ռիսկեր ՝

- Ուսուցչի պասիվություն
- ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում լիարժեք օգտվել համակարգիչներից /եթե վերապատրաստումը հեռավար է/

- թույլ ինտերնետ կապ /եթե վերապատրաստումը հեռավար է/
- կարծրատիպեր սեփական ուժերի նկատմամբ

Ռիսկերի նվազեցման ուղիներ՝

- Աջակցել ուսուցիչներին՝ վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքներում
- Ապահովել հզոր ինտերնետ կապ
- Անհրաժեշտության դեպքում տրամադրել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված ձեռնարկներ, գրքեր, դասագրքեր,համակարգիչներ, պլանշետներ
- Մեղմացնել կարծրատիպերը

Նյութատեխնիկական հնարավորություններ և անհրաժեշտ պայմաններ՝

- համակարգիչներ
- անհրաժեշտ գրքեր, դասագրքեր, ձեռնարկներ
- բարոյահոգեբանական մթնոլորտ

Արդյունքը՝

- Կրթության մակարդակի որակական փոփոխություն,
- Կրթական գործընթացի բովանդակային զարգացում
- Բարձր ինտելեկտ ունցող ուսուցիչ:

Այժմ Պուշկինոյի հիմնական դպրոցի բոլոր ուսուցիչները մասնակցում են վերապատրաստման՝ յուրացնելով նոր չափորոշիչները, որը կապահովի առաջադիմության աճ յուրաքանչյուր դասարանում:

Կրթության որակի արդյունքի գնահատման ռուբրիկ՝

Գերազանցիկ և առաջավոր աշակերտների տոկոսն ըստ դասարանների	Մինչև 30% բավարար	30-50% լավ	50-100% գերազանց
3-րդ դասարան			
4-րդ դասարան			
5-րդ դասարան			
6-րդ դասարան			
7-րդ դասարան			
8-րդ դասարան			
9-րդ դասարան			

3.ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Նպատակը՝

Բարելավել դպրոցի շենքային պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը

Խնդիր՝

Դպրոցականների նախասիրություններին, ունակություններին և համայնքի պահանջմունքներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման համար կարևոր է դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավումը: Նյութատեխնիկական բազայի բարելավման առաջին կարևոր գործոնը եղածի արդյունավետ օգտագործումն ու պահպանումն է :

Նպատակին հասնելու ուղիները՝

- Դպրոցի ընթացիկ վերանորոգում, Դասասենյակների համալրում նոր գույքով Համակարգչային կաբինետի համալրում նոր, ժամանակակից տեխնիկայով
- Գրադարանի վերանորոգում և կահավորում նոր գույքով
- Դպրոցի բակում աղբի տեսակավորման համար աղբամանների տեղադրում

Հնարավոր ռիսկեր՝

- Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը
- Ոչ բավարար ֆինանսական հնարավորություն

Ռիսկերը մեղմացնող ուղիներ՝

- Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրեր իրականացնելու համար:
- Փնտրել բարերարներ:
- Օգտագործել ունեցած նյութատեխնիկական բազան
- Վերօգտագործել հինը,նոր կյանք հաղորդել և պատրաստել հետաքրքիր անհրաժեշտ իրեր / սեղան, պլաստիկե շշեր և այլն/
- Դպրոցի առօրյայի, ձեռքբերումների, սովորողների հանգստի ու ժամանցի հետ կապված դպրոցի գործունեության շարունակական լուսաբանում՝ դպրոցի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ որպես ընդունելության խթանման միջոց

Ակնկալվող արդյունքը՝

- ունենալ հարուստ նյութատեխնիկական բազա,
- ունենալ որակյալ ինտերնետ, համակարգիչներ,
- գրավիչ դպրոցական շենք,
- հարմարավետ դասասենյակներ՝ գույքով ապահովված,ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցված պայմաններ,

- հաճելի բակ, այգի, ծաղկանց
- զրուցարան՝ բարենպաստ եղանակին համապատասխան դասեր բացօթյա վարելու նպատակով
- մարզահրապարակ, մարզագույք,
- խոհանոցի համար անհրաժեշտ գույք
- ուսուցչանոցի համար կահույք
- վերանորոգված սանհանգույց
- կարգված ջրամատակարարում,
- գազաֆիկացում և լոկալ ջեռորաուցում,
- որակյալ կրթական գործընթաց և կոմպետենտ շրջանավարտ

Արդյունքի գնահատման ռուբրիկ՝

Ակնկալվող արդյունքը	Առկա է	Առկա է մասամբ	Բացակայում է
• ունենալ որակյալ ինտերնետ, համակարգիչներ			
• գրավիչ դպրոցական շենք			
• հարմարավետ դասասենյակներ			
• հաճելի բակ, այգի, ծաղկանց			
• զրուցարան			
• մարզահրապարակ, մարզագույք,			
• խոհանոցի համար անհրաժեշտ գույք			
• ուսուցչանոցի համար կահույք			
• վերանորոգված սանհանգույց			

4.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Նպատակը ՝ գիտակ, կոմպետենտ քաղաքացու ձևավորում

Խնդիր ՝

- Սովորողների մոտիվացիայի խթանում
- Ուսումնառության որակի բարելավում
- Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցությունների շրջանակների լայնացում, աշակերտական ինքնավարության խթանում
- Արժեհամակարգի ձևավորում

Նպատակի իրագործման ուղիները ՝

- Սովորողին տալ բավարար գիտելիքներ գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ,
- զարգացնել քննադատական, տրամաբանական մտածողություն
- զարգացնել վերլուծողական, համեմատական, հակադրման, հիմնավորման մտածելակերպը
- զարգացնել փաստարկման, ապացուցման, կանխատեսման, պլանավորման, մտահանգումներ անելու մտածելակերպը
- զարգացնել հիմնախնդիրները դիտարկելու,իրավիճակը վերլուծելու, դրանց լուծման հնարավոր եղանակները գտնելու կարողություններ
- զարգացնել հետաքրքրություն և քննադատական մոտեցում,
- զարգացնել իրավիճակը ճիշտ վերլուծելու կարողություն,
- զարգացնել ինքնուրույն որոշումներ կատարելու կարողությունները
- սովորողին հնարավորություն ընձեռել՝ կիրառելու ստացած գիտելիքները նոր իրավիճակում,
- անհատական աշխատանք տանել առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ :

Ակնկալվող արդյունքը՝ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հանրակրթության հետևողական և նպատակասլաց իրականացման արդյունքում, մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ պետք է ակնկալել, որ շրջանավարտը կունենա արժեհամակարգ և կկարողանա.

- օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից
- լսել, ընկալել և համարժեք վերաբորմունք դրսևորել,
- բանավիճել, բանավոր և գրավոր զարգացած խոսք կառուցել,
- ունենա խմբում աշխատելու կարողություններ,
- դրական հարաբերություններ հաստատել, մասնակցել արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներին,
- զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,
- ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, գիտենա հարգել գործընկերոջ իրավունքները,
- զերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից և կանխակալ մոտեցումներից, զերծ մնալ վնասակար ազդեցություններից

  / ծխախոտ, ալկոհոլ, թմրամիջոց/
- ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները,
- սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,
- դրսևորել առողջ մրցակցություն բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել, վերահսկել սեփական վարքը,
- խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամքը,
- սովորի և սովորեցնի, կողմնորոշվի տարբեր իրավիճակներում, կիրառի գիտելիքները նոր իրավիճակներում,
- ունենալ պատասխանատվություն ու պարտաճանաչություն,
- կգիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, կունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն,կլինի ազգային լավագույն ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը,

- մտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ,
- կիմանա իր իրավունքները և պարտականությունները, կլինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, հայրենասեր, նախաձեռնող, կլինի հասարակական գործում դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- օժտված կլինի ինքնուրույն մտածելակերպով տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությամբ,
- կտիրապետի ՀՀպետական լեզվին,
- կգիտակցի ընտանիք կազմելու անհրաժեշտությունը,
- կլինի աշխատասեր, կարող է ընտրել որևէ մասնագիտություն,կազմել ընտանիք և ինքնուրույն վարել տնտեսությունը
- կտիրապետի մեդիագրագիտության կանոններին, կունենա վստահություն սեփական ուժերի հանդեպ:

Ռիսկեր ՝

- Սեփական ուժերի նկատմամբ թույր կարծիք,
- Սովորողների աշխատունակության անկում
- Ոչ բավարար նյութատեխնիկական բազա

Ռիսկերը նվազեցնող ուղիներ ՝

- Սեր առաջացնել ուսման նկատմամբ,
- Ուշադրության կենտրոնում պահել սպորտային միջոցառումները, սպորտլանդիաները,
- Հետևել սովորողների առողջ ապրելակերպի, և ճիշտ սնման կանոնների, հիգիենայի կանոնների պահպանմանը,
- Հետևել սանիտարական նորմերի պահպանմանը:

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ ՝

- համակարգիչներ
- անհրաժեշտ գրքեր, դասագրքեր, ձեռնարկներ
- լուսավոր, վերանորոգված , ամենաանհրաժեշտ գույքով ապահովված դասասենյակներ

- որակյալ մասնագետներ
- կրթության կազմակերպման գործում ներառված ԾԽ, համայնք, լիազոր մարմին
- բարոյահոգեբանական մթնոլորտ
- հալածանքի, օտարման, բռնության բացակայություն

5.Կառավարման, խորհրդակցական մարմիններ

Նպատակ ՝

Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության ամրապնդում,

Դպրոց-համայնք կապի խթանում

Խնդիր՝

Կառավարման և խորհրդակցական մարմինների գործառույթների իրազեկում, նրանց միջև կապերի ամրապնդում

Նպատակին հասնելու գործողություններ՝

- Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը
- Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը
- Ստեղծել միասնական մեթոդական միավորումներ այլ դպրոցների հետ

Ռիսկեր ՝

- Շահագրգիռ կողմերի զբաղվածությամբ պայմանավորված ոչ հաճախակի հանդիպումներ
- Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ՝

- Համակարգիչ, ինտերնետ
- Պրոյեկտոր
- Տպիչ
- Գրենական պիտույքներ
- Լուսավոր դասասենյակ
- Բարոյահոգեբանական մթնոլորտ

6.Համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Նպատակը՝ Կոմպետենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացու ձևավորում

Խնդիրը՝

- Համագործակցության շրջանակի ընդլայնում
- Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում , սոցիալ-մշակութային դպրոցի ստեղծում

Նպատակին հասնելու ուղիներ՝

- Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ.
- Աղբի տեսակավորում, թափոնների հանձնում

- Շաբաթօրյակ, ծառատունկ
- Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ
- Նախագծային աշխատանքի իրագործում
- Սոցիալ-մշակութային դպրոցի հիմնում՝
- Դպրոցի շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես- վաճառքի կազմակերպում՝ հասույթը ուղղելու դպրոցի որևէ կարիքի բարելավմանը/ համայնքի և ծնողխորհրդի հետ միասին/
- Անցկացնել ստեղծագործական շարադրությունների մրցույթներ

Ռիսկեր ՝ Շահառու կողմերի պասիվություն

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Նպաստել շահառու կողմերի ակտիվ ներգրավմանը, կարևորել համայնք- դպրոց կապը

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ ՝

- Համակարգիչ
- Ինտերնետ
- Գրենական պիտույքներ
- Բարոյահոգեբանական մթնոլորտ

7. Ուսումնական միջավայր

Նպատակը՝

Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավվմանը

Խնդիրը՝ Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում

Նպատակի իրագործման գործողություններ՝

- Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում
- Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներ դնում դասապրոցեսում
- Սովորողների նախասիրություններից ու կարողություններից ելնելով՝ խմբակների ձևավորում

Ռիսկեր՝

Ոչ բավարար ֆինանսական միջոցներ

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
- Ներդպրոցական վերահսկողություն՝ վերհանել խնդիրները, կարգավորել դրանք
- Տեխնոլոգիաներին ու կիրառվող նորարարություններին տիրապետում

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ՝

- Համակարգիչ
- Ինտերնետ
- Գրենական պիտույքներ, անհրաժեշտ գույք

- Լուսավոր դասասենյակներ
- Բարոյահոգեբանական մթնոլորտ
- Օտարման, բռնության, հալածանքի բացառում

8.Տեխնոլոգիաներ ու կիրառվող նորարարություններ

Նպատակը՝

Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում

Խնդիրը՝ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում

Նպատակի իրագործման գործողություններ՝

- Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում
- Ուսուցիչների մասնակցության խթանում տարբեր սեմինարների, վեբինարների՝ հեռավար կրթության հմտությունները կատարելագործելու նպատակով

Ռիսկեր՝

- Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն
- Ուսուցիչների կողմից պասիվություն

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում

- Ռեսուրսների արդյունավետ կառավարում
- Մոտիվացնել , խրախուսել ուսուցիչներին

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ ՝

- Համակարգիչ, տպիչ, պրոյեկտոր
- Ինտերնետ

9. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Նպատակը՝

Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին

Խնդիրը ՝

Ապահովել ուսուցիչների մասնակցությունը իրավական ակտերի, նախագծերի քննարկմանը, բարձրացնել շահառու անձանց մոտ իրավական գրագիտությունը

Նպատակի իրագործման գործողություններ ՝

- Փոփոխված իրավական ակտերի վերաբերյալ քննարկումների անցկացում խորհրդակցկան մարմիններում
- e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում
- Իրավական ակտերի լուսաբանում

Ռիսկեր՝ ինտերնետի թուլացում

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- հետևողական աշխատանք,
- ժամանակին վերահսկողություն

- կանոնակարգված աշխատանք

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ՝

- Համակարգիչ, տպիչ, պրոյեկտոր
- Ինտերնետ
- Գրենական պիտույքներ

10.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Նպատակը՝

Ֆինանսական միջոցների ավելացում

Խնդիրը՝ Աշակերտ թվի պակասեցման պատճառով դպրոցի բյուջեի պակաս, արտաբյուջետային միջոցների ձևավորում

Նպատակի իրագործման գործողություններ՝

- Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում
- Դպրոցի գործունեության, ակտիվ և հագեցած առօրյայի լուսաբանում

Ռիսկեր՝

- Աշակերտ թվի նախատեսվածից քչացում և ֆինանասի ոչ բավարար տնտեսումներ
  - Պետական բյուջեի սղություն
  - Բարերարներ չգտնվելու վտանգ
  - Դրամաշնորհ չստանալու վտանգ

Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝

- Բյուջեի ճիշտ պլանավորում,
- Նախահաշվի ճիշտ կազմում,

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում,
- Պարբերաբար հաշվետվություններ կառավարման խորհրդում, խորհրդակցական մարմիններում,
- Ակտիվ ներգրավում ծնողական համայնքին, ՏԻՄ-ին և կրթությունը կառավարող մարմիններին:

Նյութատեխնիկական հնարավորություններ, անհրաժեշտ պայմաններ '

- Համակարգիչ, ինտերնետ

5.Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները, կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական աղբյուրները.

Գնահատումն իրականացնել ըստ 6-րդ կետի գնահատման աղյուսակի.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՈՂ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
Ուսումնական հաստատության մասնակի վերանորոգում	Տնօրեն, տեխնիկական անձնակազմ, հրավիրված աշխատակիցներ	2023-24	Հարմարավետ և հաճելի դպրոց	Արդյունքը գնահատել ըստ № 2 չափանիշների	Դպրոցի բյուջեի միջոցներով , ներգրավել բարերարների, դրամաշնորհ ստանալու միջոցով

Բակի բարեկարգում, ծառատունկ,ծաղկանոցի ձևավորում	Տնօրեն, ուսուցիչներ,աշակերտներ, տեխաշխատողներ,	2023-24	Հաճելի բակ, էկոլոգիայի պահպանում	Արդյունքը գնահատել ըստ № 2 չափանիշների	Դպրոցի բյուջե, բարերարի օգնությամբ
Թեքահարթակի կառուցում	տնօրեն	2023-24	Խելացի հարմարեցում ԿԱՊԿՈՒ սովորողների, հաշմանդամների համար	Արդյունքը գնահատել ըստ № -2 չափանիշների	Դպրոցի բյուջե
Կաթսայատան տանիքի վերանորոգում	Տնօրեն, տեխանձնակազմ	2024-25	Վառելանյութի պահպանման համար ապահով ծածկ:	Արդյունքը գնահատել ըստ № -2 չափանիշների	Դպրոցի բյուջե
Մարզահրապարակի կառուցում	Կառավարություն, տնօրեն, բարերար	2023-24	Հաճելի և հարմարավետ մարզահրապարակ, առողջ ապրելակերպի խթանում	Արդյունքը գնահատել ըստ № 2 չափանիշների	Դպրոցական բյուջե
Մարզագույքով ապահովում	Կառավարություն, տնօրեն, բարերար	2027-28	Առողջ ապրելակերպի խթանում, սեր սպորտի նկատմամբ	Արդյունքը գնահատել ըստ № -1 չափանիշների	Պետական և դպ. Բյուջե, համայնք.
Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում	Տնօրեն, համայնք,	2025-26	Հարմարավետ դպրոց	Արդյունքը	Դպրոցական բաղադրիչին տրվող

	ԿԳՄՄՆ			գնահատել ըստ № 1 չափանիշների	ֆինանսի հաշվին
ՏՀՏ-ի կիրառում՝ հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից, այդ նպատակով կազմակերպել սեմինարներ	Տնօրեն, ԿԳՄՄՆ, կրթական հիմնադրամներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ժամանակի հետ քայլող, բանիմաց մասնագետներ	Արդյունքը գնահատել ըստ № 3 չափանիշների	-
Դպրոցում սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմանների ապահովում (հակահրդեհային, լուսային, ջերմային)	Տնօրեն, համայնքապետ, ուսուցիչներ, ծնողներ, սովորողներ, զինղեկ, տարածաշրջանի բժիշկ , դպրոցի տեխնիկական անձնակազմ:	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Անվտանգ ուսումնական հաստատություն	Արդյունքը գնահատել ըստ № 2 չափանիշների	-
Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանման միջոցառումներ	Տնօրեն, ծնող, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ակտիվ, խելամիտ աշակերտներ	Արդյունքը գնահատել ըստ № 4 չափանիշների	-
Սովորողների ֆիզիկական և առողջական վիճակի ուսումնասիրության նպատակով սերտորեն	Տնօրեն, ծնող, բժիշկ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Առողջ, ակտիվ սովորողներ	Արդյունքը գնահատել ըստ № -5	-

համագործակցել համայնքին սպասարկող բժշկի հետ				չափանիշների	
Համագործակցել տարածքային բազմամասնագիտական թիմի հետ	Տնօրեն, ծնող, բժիշկ, բազմամաս. Թիմ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելամիտ հարմարեցումներ	Արդյունքը գնահատել ըստ № -5 չափանիշների	-
ԿԱՊԿՈՒ սովորողներին ընդգրկել ուսումնադաստ.միջոցառումների կազմակերպմանը	Տնօրեն,ԴԱԿ, ծնող, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ակտիվ ԿԱՊԿՈՒ սովորող	Արդյունքը գնահատել ըստ № -5 չափանիշների	-
Կազմակերպել խորհրդատվություններ՝ նվիրված ներառական կրթությանը	Տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բանիմաց մանկավարժներ և ծնողներ	Արդյունքը գնահատել ըստ № -5 չափանիշների	
Իրականացնել ուսումնադաստիարակչական պլանով նախատեսած բոլոր միջոցառումները	Տնօրեն, ԴԱԿ, ուսուցիչ, ԱԽ, ԾԽ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բազմակողմանի դաստիարակված սաներ	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-
Պահպանել սովորողների իրավունքները ուսումնական հաստատությունում, բացառել հալածանքը, օտարումը հետևողական լինել պարտականությունների	Տնօրեն, ԴԱԿ, ուսուցիչ, ԱԽ, ԾԽ, ծնողներ, համայնք	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բարոյահոգեբանական միջավայր	Արդյունքը գնահատել ըստ № -8 չափանիշների	-

կատարմանը, ներքին կարգապահական կանոնների պահպանմանը					
Բարեգործ-բարերարների, հովանավորների ներգրավման աշխատանքներ ԿԽ-ի և ԾԽ-ի հետ	Տնօրեն, ուսուցիչ, ծնող	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Հաճելի միջավայրի ստեղծում	Արդյունքը գնահատել ըստ № -7 չափանիշների	-
Լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեության իրականացում	Տնօրեն, ուսուցչական կազմ, հրավիրված մասնագետներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Հաճելի միջավայրի ստեղծում	Արդյունքը գնահատել ըստ № -10 չափանիշների	-
Կառավարման խորհրդի դերի բարձրացում՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում	Տնօրեն, ԾԽ,ՄԽ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ակտիվ համագործակցությունն	Արդյունքը գնահատել ըստ № -9 չափանիշների	-
Օժտված և շնորհալի սովորողների բացահայտում, նրանց կարողություններին համապատասխան կրթության կազմակերպում,	Տնօրեն, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելացի աշակերտների ավելացում	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-

օլիմպիադաների անցկացում					
Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների,նրանց գործունեության դերի և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ	Տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բազմակողմանի զարգացած շրջանավարտ	Արդյունքը գնահատել ըստ № -5 չափանիշների	-
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի ճիշտ և ժամանակին վարում	Տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Պարտաճանաչ աշխատանք	Արդյունքը գնահատել ըստ № -11 չափանիշների	-
Էլեկտրոնային մատյանի ժամանակին և ճիշտ վարում	Տնօրեն, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում		Արդյունքը գնահատել ըստ № -11 չափանիշների	-
Խորհրդակցական մարմինների իրավագիտակության բարձրացմանն ուղղված սեմինարների կազմակերպում	Տնօրեն,ԿԽ, ՄԽ,ԾԽ,Ախ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բանիմաց աշակերտներ, ծնողներ, ուսուցիչներ	Արդյունքը գնահատել ըստ № -9 չափանիշների	-
Ծնող-դպրոց կապի ամրապնդում	Տնօրեն, ԾԽ, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ակտիվ ծնողների ավելացում,պատասխանատվության բարձրացում	Արդյունքը գնահատել ըստ № -7 չափանիշների	-
Ապահովել ծնողներին	ԾԽ, տնօրեն,	Ծրագրի	Խելացի ծնողներ		-

տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ	ԴԱԿ	իրականացման ամբողջ ընթացքում		Արդյունքը գնահատել ըստ № -7 չափանիշների	
Ներգրավել ծնողներին արտադպրոցական, արտադասարանական միջոցառումներում, ստեղծել երկարօրյա խմբակ	Տնօրեն,ԾԽ, ԱԽ,ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Ակտիվ ծնողների ավելացում	Արդյունքը գնահատել ըստ № -10 չափանիշների	-
Բարձրացնել ԾԽ-ի դերը ուսուցչին խրախուսելու կամ իր պարտականությունները չկատարող ուսուցչի հանդեպ անվստահություն հայտնելու գործում	Տնօրեն, ԿԽ,ԾԽ,ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Պատասխանատու ուսուցիչների ավելացում	Արդյունքը գնահատել ըստ № -6 չափանիշների	-
Ուսումնասիրել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում	Տնօրեն, մեթոդմիավորումներ,ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելացի, ակտիվ ուսուցիչներ	Արդյունքը գնահատել ըստ № -6 չափանիշների	-
Նպաստել ուսուցիչների ինքնակրթմանը և ինքնազարգացմանը	Տնօրեն, ուսուցիչ, կրթական հիմնադրամներ, մեթոդմիավորումներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելացի ուսուցիչներ	Արդյունքը գնահատել ըստ № -6 չափանիշների	-

Աջակցել, խրախուսել սկսնակ ուսուցչին փորձի փոխանակման, փոխադարձ դասալսման միջոցով	Տնօրեն, ուսուցիչ, մեթոդմիավորումներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելացի, աշխատասեր ուսուցիչ	Արդյունքը գնահատել ըստ № -6 չափանիշների	-
Կազմակերպել ուսուցիչների ատեստավորման աշխատանքները	Տնօրեն, ուսուցիչ, կրթական հիմնադրամներ, մեթոդմիավորումներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բանիմաց ուսուցիչ	Արդյունքը գնահատել ըստ № -6 չափանիշների	-
Աջակցել ուսուցիչներին որակավորման տարրակարգ ստանալու կամ գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու գործում	Տնօրեն, ուսուցիչ, կրթական հիմնադրամներ, մեթոդմիավորումներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բանիմաց ուսուցիչ	Արդյունքը գնահատել ըստ № -6 չափանիշների	-
Հետրողական լինել մեթոդմիավորումների ամենամսյա աշխատանքների կատարմանը	Տնօրեն, ուսուցիչ, մեթոդմիավորումներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Պարտաճանաչություն, համագործակցություն, բանիմաց ուսուցիչներ	Արդյունքը գնահատել ըստ № -11 չափանիշների	-
Հետևողական լինել դասղեկական ժամերի կատարմանը, դասղեկական	Տնօրեն, դասղեկ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Պատասխանատվության բարձրացում	Արդյունքը գնահատել ըստ № -11	-

պլանի կատարմանը, փաստաթղթերի ճիշտ վարմանը				չափանիշների	
Հետևողական լինել ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի անցկացմանը	Տնօրեն, ուսուցիչ, մեթոդմիավորման նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելացի աշակերտներ	Արդյունքը գնահատել ըստ № 4 չափանիշների	-
Ուշադրության կենտրոնում պահել սոցիալապես անապահով և ծնողազուրկ սովորողին	Տնօրեն, ԿԽ,ԾԽ,ԱԽ,դասղեկ, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բարոյահոգեբանական մթնոլորտ	Արդյունքը գնահատել ըստ № -8 չափանիշների	-
Սովորողներին խրախուսել լավ արարքի, նորարարության համար կամ նկատողություն անել վատ արարքի դեպքում	Տնօրեն, դասղեկ, ՄԽ,ԾԽ,ԿԽ ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դաստիարակված, կարգապահ սաներ	Արդյունքը գնահատել ըստ № -3 չափանիշների	-
Դպրոցում ստեղծել բարոյահոգեբանական մթնոլորտ և մարդասիրական փոխադարձ վերաբերմունք	Տնօրեն,ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բարոյահոգեբանական մթնոլորտ	Արդյունքը գնահատել ըստ № -8 չափանիշների	-
Ակտիվացնել ԿԽ-ի	Տնօրեն, ԿԽ	Ծրագրի իրականացման	Ակտիվ համագործակցությո	Արդյունքը	-

վերահսկողական աշխատանքները		ամբողջ ընթացքում	ուն	գնահատել ըստ № -9 չափանիշների	
Կազմակերպել ուսումնադաստիարակչական կինոնկարների դիտում	ԱԽ,ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Հայրենասեր սաներ	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-
Հետևել սովորողների կարգապահությանը	Տնօրեն,ուսուցիչ, դասղեկ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Կարգապահ սաներ	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-
Նպաստել կոմպետենտ ապագա քաղաքացու ձևավորմանը	Տնօրեն, համայնք, ծնող, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Կոմպոտենտ քաղաքացի	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-
Մշտապես վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը, բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ Միջոցառումներ, հաշվի առնել բոլորի կարծիքը	Տնօրեն/ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դաստիարակված սովորողներ	Արդյունքը գնահատել ըստ № -5 չափանիշների	-
Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ կապը	Տնօրեն, աշակերտ,	Ծրագրի իրականացման	Բարոյահոգեբանակ ան մթնոլորտ	Արդյունքը	-

	ուսուցիչ	ամբողջ ընթացքում		գնահատել ըստ № -8 չափանիշների	
Համագործակցել իրավապահ մարմինների հետ:	Անչափահասների ոսիկանական տարածքային բաժին, տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Կարգապահության բարձրացում և անվտանգ, ապահով դպրոց	Արդյունքը գնահատել ըստ № -7 չափանիշների	-
Կապ պահել տարածաշրջանի քահանայի հետ, ուշադրություն դարձնել հոգևոր մշակույթի և արժեքների պահպանմանը, եկեղեցական տոներին վերաբերվող միջոցառումների կազմակերպմանը, մշակութային արժեքների պահպանմանը	Քահանա, տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Հայեցի դաստիարակված սաներ	Արդյունքը գնահատել ըստ № -7 չափանիշների	-
Կազմակերպել դաս-միջոցառումներ, բաց դասեր, վիկտորինաներ	Ուսուցիչ,ԱԽ,ԾԽ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Խելացի, ակտիվ սաներ	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-
Կատարել դասալսումներ	Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ, դասղեկներ,ուսուցիչներ, ծնողներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Պատասխանատվության բարձրացում, վերահսկողության ուժեղացում, խելացի աշակերտ	Արդյունքը գնահատել ըստ № -4 չափանիշների	-

Սահմանված գործողությունների պատասխանատուներ՝

Ծրագրի կատարման և դրանում արտացոլված նպատակների և գործողությունների իրականացման հիմնական պատասխանատուն, իհարկե, դպրոցի **տնօրենն** է: Տնօրենը սահմանում է աշխատողների աշխատանքայինպարտականությունները, աշխատանքային ռեժիմը, ստեղծում պայմաններ նրանցմասնագիտական որակավորման բարձրացման համար, խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը, վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը, ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար: Սակայն դպրոցի գործունեությունը լիարժեք և արդյունավետ կազմակերպելու գործում անչափ կարևոր է կառավարման և խորհրդակցական բոլոր մարմինների՝ կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցված ու բարեխիղճ աշխատանքը: Դպրոցի գործունեությունը պետք է հենվի ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքների վրա, և այն պետք է լինի թափանցիկ: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է, որ դպրոցի **կառավարման խորհուրդը՝**

1. Մասնակից լինի դպրոցի ամենօրյա բնականոն գործունեությանը:
2. Դպրոցում մասնակցի լրացուցիչ ծրագրերի իրականացմանը:
3. Մասնակից լինի դպրոցի շենքի, օժանդակ տարածքի, նոր գույքի ձեռքբերման և պահպանության գործերին:
4. Մասնակցի դպրոցի պահպանման համար լրացուցիչ միջոցների հայթայթման գործին:
5. Մասնակցի դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման աշխատանքներին:

Մանկավարժական խորհուրդը պետք է պատշաճորեն կատարի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, քննարկի նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնա ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրի ընդունված որոշումների համար:

Ծնողական խորհուրդը պետք է դառնա առավել արդյունավետ վերահսկողական օղակ: Այս արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է՝

1. Ամրապնդել դպրոց-ծնող կապը, որը կնպաստի դպրոցի ուսումնա- դաստիարակչական աշխատանքների մակարդակի բարձրացմանը:
2. Կազմակերպել դպրոց-աշակերտ-ծնող օղակներն ամրապնդող միջոցառումներ:
3. Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդների հետ:
4. Ապահովել ծնողների մասնակցությունը աշակերտների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին:
5. Կազմակերպել հանդիպումներ, խորհրդակցություններ և խորհրդատվություններ ծնողների համար, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության, վիճակի ու հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին:
6. Լսել և քննարկել ծնողներին հետաքրքրող հարցեր:
7. Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ուսումնանյութական բազայիհարստացման գործին:

Աշակերտական խորհուրդը պետք է ակտիվ մասնակցություն ունենա դպրոցի շրջանակներում աշակերտներին վերաբերող հարցերում որոշումների կայացմանը, կարողանա ազատ արտահայտել իր կարծիքը, լինի նախաձեռնող: Կարծում եմ, որ դպրոցը միայն կշահի, եթե աշակերտական խորհուրդը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան ազատորեն կարծիք ներկայացնի դպրոցի կառավարման և խորհրդակցական մյուս մարմիններին:

6.ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ուսումնական հաստատության գնահատումը իրականացվում է ՀՀ Կառավարության կողմից հաստատված ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻՆ համապատասխան: Կարգի ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ բաժնում տրված են հարցեր, որոնց պատասխանելով՝ դպրոցի վարչական աշխատողները իրականացնում են նախորդ ուսումնական տարվա աշխատանքների գնահատում:

Ծրագրի իրականացման պատասխանատուն և համակարգողը դպրոցի գործադիր տնօրենն է, իսկ վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը:

Գնահատման նպատակը՝

- Զարգացման ծրագրի կատարողականի ստուգում՝ վերջնարդյունքի և պատկերացրածի համեմատում,
- Նոր գործողությունների մշակում,
- Դպրոցի ամենամյա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի կազմում՝ ըստ զարգացման ծրագրի կատարողականի

Խնդիրները՝

- Կարծրատիպերի կոտրում դպրոցի գործունեության վերաբերյալ

Ծրագրի իրականացման քայլերն են՝

- Դպրոցի ներքին և արտաքին գնահատման գործընթացը ճիշտ և հետևողական կազմակերպելու համար անհրաժեշտ է պարբերաբար ներգրավել համապատասխան մարմիններին՝ աշխատանքի հիմքում դնելով անկանխակալ, անաչառ վերաբերմունք:
- Յուրաքանչյուր ուստարվա մինչև սեպտեմբերի 4-ը կազմակերպել համատեղ նիստեր և ներկայացնել դպրոցի գործունեության հաշվետվությունները:

- Ներքին գնահատման հիմք է հանդիսանում յուրաքանչյուր առարկայի գնահատման չափորոշիչները, որոնց մշակումը հանձնարարել մեթոդական մասնախմբի բոլոր անդամներին, համադրել վերջնական ավարտուն փաստաթուղթ ստանալու համար և դարձնել աշակերտների ու ծնողների համար տեսանելի և թափանցիկ:
- Բարձրացնել ուսուցչի աշխատանքի վերլուծման մակարդակը, կազմակերպել դպրոցի ներքին գնահատում՝ ընդգրկելով ուսուցիչներին, ծնողներին և աշակերտներին՝ հիմքում դնելով դասավանդման լավագույն մեթոդներ և կրթության որակն ու առաջադիմությունը:
- Ծրագիրը իրականացնել առանձին նպատակային ծրագրերի միջոցով, որոնք կարտացոլվեն դպրոցի միջնաժամկետ ծախսային ծրագրերում և ֆինանսական միջոցներում: Ենթածրագրերի մշակումը, լրամշակումը և իրականացումը կատարել դպրոցի կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների մասնակցությամբ:
- Տնօրինության կողմից մշակել և ներդնել նպատակային ծրագրերի տեղեկատվական համակարգ, որտեղ արտացոլել համապարփակ տեղեկատվություն, հաշվետվություններ իրականացվող գործընթացների վերաբերյալ:
- Ծրագրի իրականացման գնահատումը իրականացնել սահմանված արդյունքային ցուցանիշների հիման վրա ելակետային տարի, հաշվետու –տարի համեմատության մեջ: Միաժամանակ, 2023–2028 ուստարում մշակել և հաստատել դպրոցի կրթական բնագավառի ցուցանիշների ամբողջական համակարգը:
- Հրապարակել կրթության առաջադիմության և որակի վերաբերյալ տարեկան զեկույցներ: Դրանցում արտացոլել գերատեսչություններին, աշակերտներին, ծնողներին հետաքրքրող տվյալներ: Պարբերաբար անցկացնել համադպրոցական կարծիքի հարցումներ՝ զարգացման համակարգի նկատմամբ վստահությունը գնահատելու համար: Հարցումներում ընդգրկել տարբեր շահագրգիռ խմբերի:
- Ծրագրի գնահատումը իրականացնել փուլերով՝ ներառելով ներքին գնահատման (արտաքին) արդյունքները:
- ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ բաժնում տրված են հարցեր, որոնց պատասխանելով՝ դպրոցի տնօրենը /փոխտնօրեն չունենք/ իրականացնում է նախորդ ուսումնական տարվա աշխատանքների գնահատում:

- Դպրոցի գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն օգնում են դպրոցի առաջընթացին: Զարգացման ծրագրի բոլոր դրույթները պետք է այնպես ի գործ դնել, որ վարկանիշավորման արդյունքում զբաղեցրած տեղը ընդունել որպես աշխատանքի թերացում և փորձել՝ բարձրացնելու դպրոցի վարկանիշը:
- Նախորդ ուսումնական տարվա կատարած աշխատանքները գնահատել նաև ըստ վերոգրյալ **գնահատման ռուբրիկների** և մշակել նոր ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների ամսական պլան.

Գործողություն	Սեպտ.	Հոկտ.	Նոյ.	Դեկտ.	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս
1.									
2.									
3.									

Ներքին գնահատման արդյունքում պարզվում է, որ զարգացման ծրագրի որոշ դրույթներ կատարվել են ամբողջությամբ, իսկ մյուսները մասամբ: Մյուս կողմից առաջացել են նոր խնդիրներ, որոնք նախկինում չէին ընդգրկվել ծրագրի մեջ, իսկ հիմա անհրաժեշտ է ընդգրկել: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պարբերաբար վերանայել զարգացման ծրագրիը:

Դպրոցի, որպես կրթություն իրականացնող հաստատության, գործունեությունը տարբեր տեսանկյուններից վերլուծելու և արդյունավետ կառավարում իրագործելու համար խիստ կարևոր են դպրոցի կրթական ցուցանիշները:
Ցուցանիշները միջոցներ են, որոնց օգնությամբ կարելի է հետևել համակարգում իրականացվող քաղաքականությանը՝ հիմքում ունենալով ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները և որոշակի, կանոնակարգված պարբերականությամբ կատարված հաշվարկները:

Արտաքին գնահատումն իրականացվում է նախարարության կողմից մրցույթի արդյունքում ընտրված գնահատող կազմակերպության միջոցով և 3 տարի ժամկետով տրվում է հավաստագիր, որի մեջ նշվում է հաստատության գնահատման /վարկանիշային/ միավորը /հիմք՝ ՀՀ կառավարության գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգ/:

Արդյունքը՝

- **Դպրոցի տեսլականի իրագործում 5 տարում:**
- **Կոմպոտենտ քաղաքացու ձևավորում**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

N	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ	ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
1.	Նյութատեխնիկական բազայի հարստացում	**գերազանց**	Նախատեսված գույքը ձեռք է բերվել ամբողջությամբ՝90-100 %-ով:
		լավ	Նախատեսված գույքը ձեռք է բերվել 50-75% -ով:
		բավարար	Նախատեսված գույքը ձեռք է բերվել 30-50% -ով:
2.	Ուսումնական հաստատության շենքային պայմանների և դպրոցամերձ տարածքի բարեկարգում	**գերազանց**	Նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ՝90-100 %-ով, բարեկարգվել է շենքը և հարակից տարածքը:
		լավ	Նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի՝50-75 %-ով:
		բավարար	Նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի՝30-50 %-ով:

3.	Նորարարությունների իրականացում	գերազանց	Առաջարկվել են նոր նախագծեր և դրանք <<կյանքի են կոչվել>> ամբողջությամբ:
		լավ	Նախաձեռնության իրականացման ուղղությամբ աշխատանքներ են տարվել, սակայն սահմանված ժամկետներում հնարավոր չի եղել ավարտին հասցնել:
		բավարար	Նախաձեռնության իրականացման ուղղությամբ որոշ աշխատանքներ մեկնարկել են, սակայն նշանակալի առաջընթաց չի գրանցվել:
4.	Կրթության որակի և առաջադիմության բարձրացում	գերազանց	Սովորողների առաջադիմությունը 100% է, իսկ որակը՝ 50-ից բարձր:
		լավ	Սովորողների առաջադիմությունը 100% է, իսկ որակը՝ 30-50%:
		բավարար	Առաջադիմությունը ցածր է 100%-ից, իսկ որակը՝30-ից:
5.	Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	գերազանց	Դպրոցում երաշխավորված են այլակարծությունը, պաշտպանված են սովորողների շահերն ու իրավունքները, ուսումնական գործընթացում ներառված են բոլոր սովորողները,ձևավորված է մասնակցային, սովորողների ինքնաարտահայման ու ինքնադրսևորման նպաստավոր միջավայր:
		լավ	Դպրոցում այլակարծությունը սահմանափակող, սովորողների շահերն ու իրավունքները ոտնահարող դեպքեր հազվադեպ են գրանցվում, առկա է սահմանափակ ներառական և մասնակցային արժեքային միջավայր:
		բավարար	Դպրոցում սահմանափակվում է այլակարծությունը, սովորողների շահերն ու իրավունքները ոտնահարվում են, ապահովված չէ ներառական միջավայր ԿԱՊԿՈՒ սովորողի համար, ազգային և համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումները թույլ են:
6.	Դպրոցի աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	գերազանց	Ստեղծված են ուսուցիչների ինքնակրթությունը խթանող բավարար պայմաններ, կազմակերպվում են վերապատրաստումներ, մշտապես արժևորվում և խրախուսվում է լավ աշխատանքը:
		լավ	Առկա է արժանիքների հիման վրա անձնակազմի խրախուսում, որին, սակայն, անձնակազմը վերապահումով է մոտենում, դպրոցում առկա է անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր:
		բավարար	Դպրոցում անձնակազմի ինքնակրթության բոլոր պայմաններն ապահովված չեն, աշխատողն իրեն գնահատված չի զգում, երբևէ չի խրախուսվում:
7.	Համայնքի, ծնողների, կրթությունը կառավարող մարմինների, իրավապահ	գերազանց	Ծնողներն ակտիվորեն ներգրավված են ուսումնադաստիարակչական գործընթացում, ակտիվորեն համագործակցում են ՏԻՄ-ի հետ:
		լավ	Ծնողները ներգրավված են ուսումնադաստիարակչական գործընթացում, սակայն սեփական նախաձեռնություններով հանդես չեն գալիս, ՏԻՄ-ի և այլ գործընկերների

	մարմինների, գործընկերների հետ համագործակցության ամրապնդում		հետ ձևավորված է սահմանափակ համագործակցություն:
		բավարար	ՏԻՄ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությունը ձևական է, ծնողները ուսումնադաստիարակչական գործընթացում չունեն բավարար ներգրավվածություն:
8.	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	**գերազանց**	Դպրոցում բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը, առկա է առողջ բարոյահոգեբանական միջավայր, յուրաքանչյուր սովորող տեղեկացված է իր իրավունքների ու պարտականությունների մասին, բռնության դեպքերի կանխարգելման գործում ներգրավվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները, կազմակերպվում են սեմինարներ, քննարկումներ:
		լավ	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր հազվադեպ են գրանցվում, չեն ոտնահարվում սովորողների և աշխատողների իրավունքները:
		բավարար	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքները գտնվում են ոչ բավարար մակարդակի վրա,առկա է անառողջ բարոյահոգեբանական միջավայր:
9.	Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ	**գերազանց**	Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ համագործակցություն, նիստերը կրում են պարբերական բնույթ, որոնց շրջանակներում քննարկվում են դպրոցում կրթության կազմակերպման օրակարգային հարցերը:
		լավ	Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև առկա է փոխվստահելի հարաբերություն, նիստերը կազմակերպվում են հաճախակի՝ ոչ բոլոր անդամների մասնակցությամբ:
		բավարար	Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև առկա է փոխվստահելի հարաբերություն, նիստերը կազմակերպվում են ոչ հաճախակի՝ ոչ բոլոր անդամների մասնակցությամբ:
10.	Արտադպրոցական աշխատանքների, երկարօրյա պարապմունքների կազմակերպում	**գերազանց**	Սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են պարբերաբար, ներառվում են նաև ԿԱՊԿՈՒ սովորողները: Դպրոցում առկա են երկարօրյա ուսուցմանն անհրաժեշտ պայմաններ:
		լավ	Սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են ոչ պարբերաբար: Դպրոցում մասամբ են առկա երկարօրյա ուսուցմանն անհրաժեշտ պայմաններ:
		բավարար	Սովորողների հետ արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են հազվադեպ, դպրոցում առկա չեն երկարօրյա ուսուցմանն անհրաժեշտ պայմաններ:

11.	Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքներ	**գերազանց**	Դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի ակտիվ մասնակցություն, հաճախ կազմակերպվում են նախագծերի քննարկումներ, անձնակազմը լավ տեղեկացված է դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, ժամանակին կազմակերպվում է դրանց վարումը:
		լավ	Դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի ակտիվ մասնակցություն, սակայն հաճախ չեն կազմակերպվում նախագծերի քննարկումներ:
		բավարար	Դպրոցում իրավական ակտերի կազմման գործում առկա է անձնակազմի ոչ ակտիվ ներգրավվածություն, բավարար չափով նախագծերի քննարկումներ չեն կազմակերպվում, անձնակազմը բավարար չափով տեղեկացված չէ դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին:

7.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԶԾ – ի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերն են՝

- Պետության սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացումը
- Հաստիքների փոփոխությունը
- Ծախսերի և պահանջների անհամապատասխանությունը
- Ուսուցչական կազմի փոփոխությունը
- Ուսուցիչների վերապատրաստումների նկատմամբ անլուրջ վերաբերմունք
- Աշխատանքների իրականացման թույլ վերահսկողություն
- Ծրագրերի ոչ իրատեսական լինելը
- Անսպասելի իրավիճակներից՝ արտագաղթ, պատերազմ, համավարակ

• Իրավիճակից դրդված՝ առցանց կրթություն

Ռիսկերի նվազեցման ուղիները՝

- Աշխատանքային պատասխանատվություն բոլոր ոլորտներում,
- Աշխատանքների վերահսկողության ուժեղացում,
- Ֆինանսական ծախսերի վերանայում,
- Իրատեսական աշխատանքների պլանավորում,
- Թերահավատության կարծրատիպերի կոտրում,
- Աշխատունակության բարձրացում,
- Յուրաքանչյուր ոլորտում ճիշտ առաջնորդի նշանակում,
- Բարոյահոգեբանական հաճելի մթնոլորտի ապահովում և միասնականութուն
- Աշխատանքների ճիշտ պլանավորում,
- Նորամուծությունների ներմուծում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ	Պասիվություն, պատասխանատվության բացակայություն	Նպաստել շահառու կողմերի ակտիվ ներգրավմանը, կարևորել համայնք- դպրոց կապը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ		
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	• ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում լիարժեք օգտվել համակարգիչներից • թույլ ինտերնետ կապ • լաբորատորիաների, լաբորատոր նյութերի և սարքավորումների բացակայություն • մարզադահլիճի և մարզագույքի բացակայություն • Ուսուցչի պասիվություն • Կարծրատիպեր սեփական ուժերի նկատմամբ	• կազմակերպել սեմինարներ մեդիագրագիտության վերաբերյալ • օգտագործել երիտասարդների ավյունն ու գրագիտությունը ՏՀՏ-ի կիրառման վերաբերյալ՝ մեծահասակներին սովորեցնելու նպատակով • օգտագործել փորձառու ուսուցիչների առաջավոր փորձը • ինտերնետ կապի հզորացում
ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԵՎ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ	• Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը • Ոչ բավարար ֆինանսական	• Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրեր իրականացնելու համար:

	հնարավորություն	• Փնտրել բարերարներ: • Օգտագործել ունեցած նյութատեխնիկական բազան • Վերօգտագործել հինը,նոր կյանք հաղորդել և պատրաստել հետաքրքիր անհրաժեշտ իրեր / սեղան, պլաստիկե շշեր և այլն/ • Դպրոցի առօրյայի, ձեռքբերումների, սովորողների հանգստի ու ժամանցի հետ կապված դպրոցի գործունեության շարունակական լուսաբանում՝ դպրոցի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ որպես ընդունելության խթանման միջոց
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	• Սեփական ուժերի նկատմամբ թույր կարծիք, • Սովորողների աշխատունակության անկում • Ոչ բավարար նյութատեխնիկական բազա	• Սեր առաջացնել ուսման նկատմամբ, • Ուշադրության կենտրոնում պահել սպորտային միջոցառումները, սպորտլանդիաները, • Հետևել սովորողների առողջ ապրելակերպի, և ճիշտ սնման կանոնների, հիգիենայի կանոնների պահպանմանը,

		• Հետևել սանիտարական նորմերի պահպանմանը • Բացառել հալածանքն ու օտարումը
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	• Շահագրգիռ կողմերի զբաղվածությամբ պայմանավորված ոչ հաճախակի հանդիպումներ • Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը • Պատասխանատվության բացակայություն	Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԱՐՈՒՄ	• ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում լիարժեք օգտվել համակարգիչներից • թույլ ինտերնետ կապ • կարծրատիպեր և ծուլություն	• Երիտասարդ ուսուցիչների ավյունի և հմտությունների օգտագործում • Ինտերնետի հզորացում • Իրավական ակտերի ժամանակին վարում • Պայքար ծուլացման դեմ

8.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ,ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծության արդյունքում կարող են պարզվել, որ առկա են մի շարք *հիմնախնդիրներ.*

- Պետական բյուջեի սղություն
- Բարերարներ չգտնվելու վտանգ
- Դրամաշնորհ չստանալու վտանգ

Հիմնախնդիրների լուծման համար պետք է.

- Բյուջեի ճիշտ պլանավորում,
- Նախահաշվի ճիշտ կազմում,
- Պարբերաբար հաշվետվություններ կառավարման խորհրդում, խորհրդակցական մարմիններում
- Մարդկային ռեսուրսների ճիշտ ընտրություն
- Ակտիվ ներգրավում ծնողական համայնքին, ՏԻՄ-ին և կրթությունը կառավարող մարմիններին:

Սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով չպետք է տուժեն ուսումնադաստիարակչական աշխատանքները: Ուսումնական հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Որպես տնօրենը կարող եմ

- մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում,
- դիմել տարբեր բարեգործների՝ օժանդակություն ստանալու ակնկալիքով,
- դիմել և շահել դրամաշնորհներ,
- կանխատեսել դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները
- կազմել նախահաշիվ

- ֆինանսական միջոցները ծախսել նախահաշվին համապատասխան
- իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար,
- իրականացնել ձեռնարկատիրական տարբեր գործունեություններ.

Օրենքով չարգելված եղանակով ֆինանսի հայթհայթումը, բարերարների հետ համագործակցումը, կառավարման, ծնողական, աշակերտական խորհուրդների հետ աշխատանքների ակտիվացումը, ձեռնարկատիրական և ուսումնաարտադրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր են: Օրինակ՝

- դպրոցականները կարող են դեղաբույսեր հավաքել և վաճառել,
- դպրոցի ցանկապատման հարցը լուծել ծառատնկմամբ՝ պահպանելով էկոլոգիան:

Գարնանը, այցելելով Մարգահովիտ գյուղում հիմնած էկոայգի, սովորողները ավելացրին իրենց գիտելիքները բնության պահպանության վերաբերյալ: Բազմաթիվ սովորողների միասնական կարծիքով դպրոցը ցանկապատելու խնդիրը պետք է լուծել առանց ֆինանսական ծախսերի՝ բարդիների ծառատնկմամբ:

https://www.facebook.com/photo?fbid=6070449133050555&set=pcb.6070449786383823

- Դպրոցի ցանկապատման հարցը լուծելուց հետո կարող են աճեցնել պտղատու ծառեր և վաճառել բերքը՝ աշակերտների մոտ սեր առաջացնելով դեպի գյուղատնտեսություն և ձևավորելով աշխատասիրություն: Ստացված շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով:
- Պուշկինոյի հիմնական դպրոցը այս ուստարում, համագործակցելով <<ԱՅԲ_ի>> հետ, իրականացրեց պլաստիկե շշերի վերօգտագործման **նախագծային աշխատանք**, որից ստացված շահույթի հաշվին ծրագրին մասնակցող թիմի անդամները գնեցին ծաղկի սերմեր և ձևավորեցին ծաղկանոցները: Կատարված աշխատանքները միտված էին ֆինանսի հայթհայթմանը, բնության պահպանությանը և օրինակելի էին համայնքի բնակիչների համար, նրանք սիրով աջակցեցին դպրոցին: Համայնքում կազմակերպված հարցումների շնորհիվ աղբահանությունը համայնքում աշխատանքները գնահատվեցին 1-5 բալային համակարգով.

https://www.facebook.com/100002565852834/videos/190656446835384/

Ձեր համայնքում կազմակերպվում են շաբաթօրյակներ:			V		
Աղբը միշտ նետում են աղբարկղի մեջ:				V	
Դպրոցականները ակտիվ մասնակցում են աղբահանությանը:					V
Ձեր համայնքում կազմակերպվում է աղբի վերօգտագործում:	V				
Աղբահանությունը կազմակերպվում է ժամանակին:				V	
Կլիմայի գլոբալ փոփոխությանը ինչպես են վերաբերվում ձեր համայնքում:			V		

Զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են մարդկային,բյուջետային և նյութատեխնիկական հետևյալ միջոցները՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ	ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
Դպրոցի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, շինարարներ	Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորչական միջոցներ	Անհրաժեշտ շինարարական պարագաներ
Կրթության որակի և ուսուցման	Տնօրեն, ՄՄ նախագահներ,	Դպրոցի բյուջե	Դիդակտիկ պարագաներ,

արդյունավետության բարձրացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	ուսուցիչներ		մեթոդական գրականություն, առարկայական պաստառներ, էլեկտրոնային ռեսուրսներ
Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, Խորհրդի անդամներ, ծնողներ, ՏԻՄ ներկայացուցիչներ		Միջոցառումների կազմակերպման անհրաժեշտ պարագաներ
Հալածանքի, օտարման, սովորողի իրավունքի ոտնահարման դեմ տարվող աշխատանքներ	Տնօրեն, ուսուցչի օգնական, ուսուցիչներ, ԴԱԿ, անչափահասների տեսչություն, ոստիկանություն		էլեկտրոնային ռեսուրսներ, իրազեկող գրականություն
Իրավական ակտերի վարման և մեթոդական աշխատանքների ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, ՄՄ նախագահներ, վերապատրաստողներ	Դպրոցի բյուջե	Մեթոդական գրականություն, էլեկտրոնային ռեսուրսներ
Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	Տնօրեն, ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ		էլեկտրոնային ռեսուրսներ
Համագործակցություն համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող,ԱԽ, ԾԽ	Դպրոցի բյուջե	էլեկտրոնային ռեսուրսներ
Մանկավարժական համակազմի որակառրման բարելավում,ատեստավորում:	Ուսուցիչներ, կրթության կառավարման մարմիններ	Դպրոցի բյուջե	Մեթոդական գրականություն, էլեկտրոնային

			ռեսուրսներ
Նորարարություն և ՏՀՏ	Համայնք, դպրոցի աշխատակազմ, աշակերտներ	Դպրոցի բյուջե, դրամաշնորհ	Էլեկտրոնային ռեսուրսներ
Ուսումնական միջավայրի բարելավում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ	Դպրոցի բյուջե	Դիդակտիկ պարագաներ, մեթոդական գրականություն, առարկայական պաստառներ, էլեկտրոնային ռեսուրսներ

Որպես դպրոցի տնօրեն պետք է գտնեմ ուղիներ՝ առաջին հայացքից անլուծելի խնդիրները լուծելու համար: Այդպես եմ իրականացնելու խնդիրների լուծումը՝ ապահովելով ղեկավարածս հաստատության առաջընթացն ու զարգացումը:

9.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Հասկանալի է, որ ԴԶԾ–ն դպրոցի 5 ամյա հեռանկարային զարգացման ծրագիր է և որքան էլ այնտեղ պլանավորված նպատակները, խնդիրները և գործողությունները ճշգրտորեն ներկայացված լինեն, ժամանակի ընթացքում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, որոշակիորեն ենթարկվում են փոփոխությունների և սրբագրումների:

Դպրոցի խորհրդի կողմից ծրագրի իրականացման վերահսկողության գործընթացը ոչ թե նպատակ ունի շահարկելու դպրոցի կառավարման մարմնի իրավունքը, այլ դպրոցի խորհուրդը իր խորհրդատվական աջակցությամբ, դպրոցի ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով աջակցում և վերահսկում է տնօրենին՝ ծրագրի իրականացման բոլոր փուլում : Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության

տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է զարգացման ծրագրի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան: Դպրոցի ամենամյա աշխատանքային պլանները կքննարկվեն մանկավարժական և կառավարման խորհրդի նիստերում:

Վերահսկողության նպատակը՝

- Կրթության որակի բարձրացում,
- Կրթական գործընթացի պատշաճ իրագործում,
- Կրթական ծրագրերի իրականացում՝ ըստ չափորոշչային պահանջների,
- Կրթական ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփում,
- Կարգապահական նորմերի պահպանում,
- Արժեհամակարգի ձևավորում,
- Նոր պլանների մշակում:

Խնդիրները.

- Կարծրատիպեր դպրոցի գործունեության վերաբերյալ
- Անվստահություն արդյունավետ դասապրոցեսի ապահովմանը

Նպատակի իրականացման ուղիները՝

- Մշտապես շրջել, հետևել աշխատանքների ընթացքին, լինել աչալուրջ,
- Ժամանակ առ ժամանակ տեղեկություն-հաշվետվություն պահանջել կատարված աշխատանքների մասին,
- Անցկացնել ներքին գնահատում և ապահովել վերահսկողության բարելավումը:

- Ներքին գնահատման հաշվետվությունը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 4-ը ներկայացնել խորհրդին և մնացած գործող խորհրդակցական մարմիններին:
- Հաշվետվությունը ներկայացնել կառավարման խորհրդին տարվա մեջ երկու անգամ՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:
- Հաստատության աշխատանքային պլանը և հաշվետվությունները հասանելի դարձնել հաստատության շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողներ, համայնք:Կատարված աշխատանքներին կտեղեկանան ֆեյսբուքյան էջի, դպրոցական կայքէջի միջոցով:
- Դպրոցի զարգացմանն ուղղված կանոնավոր խորհրդատվությունների անցկացում մեկ կամ մի քանի փորձագետների հետ / առնվազն 6 ամիսը մեկ/:
- Միջոցներ ձեռնարկել թերությունների վերացման ուղղությամբ,
- Մշակել սեփական աշխատանքային ռազմավարություն,
- Գնահատել արդյունքը, խրախուսել արժանիներին,
- Կատարել լիազոր մարմնի կողմից, օրենքով նախատեսված կարգով, արվող հրահանգները,
- Ընդգրկվել և ակտիվորեն մասնակցել հասարակական ակտիվությունը խթանող,քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող միջազգային ծրագրերին,
- Ամրապնդել ծնող-դպրոց-համայնք կապը,
- Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:

Արդյունքը՝

- կրթության որակի ապահովում
- կոմպետենտ քաղաքացու ձևավորում,
- ՏՀՏ միջոցների լիարժեք կիրառում,
- Սեփական դիրքորոշում ունեցող, ինքնաքննադատական մտածողություն ունեցող անձի ձևավորում,
- Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն,
- Ապագա քաղաքացու ձևավորում, կյանքի նախապատրաստում:

Տարեկան աշխատանքային պլանով նպատակներն ու խնդիրները կսահմանվեն ըստ անելիքների առաջնահերթության՝ հաշվետվությունների հիման վրա:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N	գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	նշումներ
1.							
2.							
3.							
4.							

Զարգացման ծրագրում տեղ են զբաղեցրել.

. **Մանկխորհի կողմից առաջարկությունները..**

- ցանկապատի կառուցումը
- զուգարանի վերանորոգում
- գազի և ջրի խնդրի լուծում
- մարզահրապարակի բարեկարգում
- ցանկապատի կառուցումից հետո այգու հիմնում, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցում

Աշակերտական խորհրդի կողմից առաջարկությունները.

. • ֆուտբոլի դաշտի բարեկարգում
- գրադարանի համար ձեռք բերել պահարաններ
- կազմակերպել արշավներ
- ցանկապատել տարածքը
- ձեռք բերել մարզագույք

Ծնողական խորհրդի կողմից առաջարկությունները.

. • ջրի և գազի խնդրի լուծում
- ցանկապատի կառուցում
- սանհանգույցի վերանորոգում
- անգլերեն լեզվի ուսուցում